№ 122 ՀԻՆԳՇԱԲԹԻ 6 ՅՈՒՆԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 6 ՅՈՒՆԻՍԻ № 122

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին հարարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԳԻԾ ԴՐԻԴՈՐ Ա.Ը ԲՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա խրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Գարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թ.ի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ծրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄՇԱԿԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խնդրվում է այն բաժանորդներին, որոնք վճարել են տարեկան բաժանորդավճարի կէս մասը, ուղարկել նաեւ երկրորդ մասնավճար 5 ռուբլին, որպէսզի թերթի առաքման գործում յուլիսի 1-ից ընդհատում տեղի չունենայ:

Տարեկան բաժանորդավճարը լրացնողները կը ստանան նաեւ խոստացված ՊՐԷՄԻԱՆԵՐԸ:

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, յունիսի 9-ին, ցերեկվայ ժամը 12-ին

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ (Աբաս-Աբադեան հրապ., սեփ. տ.)

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԺՈՂՈՎԻ ԶԲԱՂՄՈՒՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.
1) Ընարութիւն Ընկերութեան նոր անդամների:
2) Նախահաշիւ 1913—4 թատերաշրջանի:
3) Ընարութիւն խորհրդի 3 փոխանդամի:
4) Ընթացիկ հարցեր: կ. առ. 466. 2—1

ԿՈՂ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄ. ԴՊՐՈՑԻ 75-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Լոյս է տեսնելու «ՏԱՐԱԶԻ» մի յատուկ ալբոմ-ալմանախ—

«ՂԱՐԱԲԱՂ ԵՒ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ» պերճաշուք մի հոյակապ հրատարակութիւն՝ ՄՆԱՑՈՒՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ ՂԱՐԱԲԱՂԻ: Այս շքեղ հանդէսի մէջ պիտի լինեն XIX դարի և մինչև օրս դարաբաղցի այն արհեստաւորների, արուեստագէտների, գիտնականների, գրականագէտների, գեղագէտների, մանկավարժների, իրաւաբանների, բժիշկների, ինժեներների, բարեգործների, հասարակական գործիչների, քաղաքագէտների, աստիճանաւորների, զինուորականների, զօրապետների, լրագրողների, հրապարակախօսների, բարձրագոյն դպրոցներ աւարտած հայուհիների, թատերասէրների, առեւտրականների, արդիւնաբերողների, վաճառականների, ազնուականների, հոգեւորականների, գեղջուկների, մելիքների պատկերները, որոնք իրանց գործով և կեանքով նշանակալից են եղել:

Տպագրվելու են «ՂԱՐԱԲԱՂ ԵՒ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ» այս փայլուն հանդէսի մէջ տեսարաններ ամբողջ Ղարաբաղի բոլոր նշանաւոր վայրերի, ինչպէս և դարաբաղցիներին պատկանող զանազան քաղաքներում, երկիրներում անների, գործարանների պատկերները:

Եւ որովհետև անհնար է բոլոր անհրաժեշտ լուսանկարները ձեռք բերելու, ուստի այսու յարգանքով հրաւիրվում են ձեռնհաս բոլոր դարաբաղցիները աջակցել մեզ և ՇՈՒՏԱՓՈԹ ՀԱՍՑՆԵԼ իրանց խմացած անձինքների և բնակած վայրերի լուսանկարները, հէնց լուսանկարների հետ էլ ամփոփ գրելով պատկերի բովանդակութիւնը:

Ցօդուածները «ՂԱՐԱԲԱՂ ԵՒ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ» ալբօմ-ալմանախի համար, ինչպէս և երգերն ու նօտաները բոլորը բացառապէս լինելու են դարաբաղցիների մտքի, արուեստի և գրչի արտադրութիւններ:

«ՂԱՐԱԲԱՂ ԵՒ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ» ալբօմ-ալմանախի բաժանորդագինը 3 ր. (մինչև յունիսի 15-ը բաժանորդագրվողների համար 2 ր.), մելքի փայլուն թղթի վրա 25 ր.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Դիմել՝ Тифлисъ, БЮРО ПЕЧАТИ, Головинскій проспектъ, № 41.
(Հ. ու.) 31. 5—1

ՇՈՒՇԻ-ԵՒԼԱԽ ՊՕՍՏԱՅԻՆ ՏՐԱԿՏ

Կայարանի գրասենեակը յայտարարում է, որ հեռագիրներով և նամակներով ընդունվում են առաջօրէն պատուէրներ կառքերի համար Եւլախում:

ՓԱԿ ԿԱՌՔԵՐԸ—կարէթ՝ 24 ր., կալեասկաները՝ 22 և 25 ր., օմնիբուսները՝ (դիլիժանս) 25—30 ր. և աւել: Առանձին տեղերի համար այդ կառքերում 4 և 5 ր.: ԲԱՑ ԼԱՆԴՕՆԵՐԸ—5 և 6 մարդու համար—արժէն 30—35 ր. և աւել: Հասցէն՝ Евлахъ, почтовая станція.

Կարգադրիչ՝ ԼԵՒՈՆ ՎԱՐԱԶԵԱՆ
օ.մ. առ. 468. 1—1

ՂԱՐԱԲԱՂԻ թեմական առաջնորդ ՋԱՒԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ձեռնարկութեամբ ներկայ տարվայ յունիսի 15-ից մինչև օգոստոսի 15-ը Շուշու թեմական դպրոցում բացվելու են

„Հանրամատչելի երգ-երաժշտական դասընթացներ"

ուսուցիչ-ուսուցչուհիների և այլ անձանց համար: Դասընթացներում աւանդվելու են հայկական և եւրոպական ձայնագրութիւն, տարբական երաժշտական թէորիա և հարմոնիա, սոլֆէջիո, դաշնամուրի դասեր և այլն: Դասախօսելու են դպրոցական երգեցողութեան, սոլֆէջիոյ, հայ և ընդհանուր երաժշտական պատմութիւնից: Դասընթացները ղեկավարելու է Ե. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԸ: Պարապմունքների համար (երգեցողութիւն, դաշնամուր և այլն) հրաւիրված են նաև երգչուհի օր. ՍԱՖԵՆԻԿ ԱԼԱՀՎԵՐԴԵԱՆ և պ. Ս. ՄՈՒՐԱԴԵԱՆ: Դասընթացների ուսման վարձն է ընդամենը 10 ր.:

Դիմել Յարութիւն ա.-ք Վարդապետեանցին. Шуша. Благочинному Арутюну Вардапетяну.
(Հ. կ.) առ. 439. 3—3

ՅՈՒՆԵՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱԾ ՎԵՐՋԸ 6 ՐՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԱՔՐՔԻՐ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա խրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Գարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թ.ի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ծրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ

Ժողովրդ. ներկայացումներ կազմակերպող

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

ԱՇՏՕՐ, հինգշաբթի, յունիսի 6-ին

Յօրելեանական ներկայացում
Ի պատիւ գեղասաց ԳԱՐԵՓԵՏ-ԴԱՒԹԵԱՆԻ
40-ամեայ բեմական գործունէութեան

Հայոց Դրամ. Ընկ. թատերասէրների խումբը ՄԱՄԱՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ կը ներկայացնէ առաջին անգամ ժողովրդական Տան բեմի վրա

I

Ընտանեկան գաղտնիք

Կոմեդիա 2 գործ., հեղ. Զեխովի, թարգմ. Տէր-Յովհաննիսեանի:

II

Յօրելեանական հանդէս

Սկիզբն է երեկոյեան հիշդ ժամը 8½-ին:
ՏԵՂԵՐԻ ԳՆԵՐԸ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԵՆ:

Հեռաձայն կարգադրիչներ՝
ԵՐԻՑԵԱՆ, ՆԱԶԱՐԷԹԵԱՆ և ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆ
466. 1—1

ՆԿԱՐԻՉ

Ա. ՓԷԹՎԱՃԵԱՆԻ

ԱՆԻԻ ԱԼԲՕՄԸ

գունատիպ

Լոյս տեսած Վիէննայի Դոաֆիլէ Քունստ Ինդուստրի Կայսերական Ընկերութեան տպարանում:

ԾԱԽՎՈՒՄ Է Թիֆլիսում. մեծաքանակ—Մաքենզիի խանութում (Մտգաթեան կղզի). իսկ հատով—«Դլաս է Ճուար» խանութում և «Դուսենբերգ» գրավաճառանոցում:
Գինը—հատով՝ 1 ր. 20 կ., մեծաքանակ գնողներին զեղչ 20%.
(հ.կ.) առ. 423. 25—4

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ

ОБОИ

ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.

357. 50—10 (հ. կ.)

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչէվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներին, նոյնպէս և վիրաբուժական կարգ ունեցող մայրաքաղաքի ստաւիոնարէ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով:

Ընդունելութիւն կանացի, ներին և մանկական բնութիւնի ունեցող երեսեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը:

Ընդունելութիւն պրոֆ. Ռ. Ռ. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կարգ ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը:

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վասիլիզորով, Վ. Ա. Զակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Եսվիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ռամիկեան, Ա. Ռ. Փիշէր, Ս. Պ. Շահպարոնեանց: Կոնսուլտանտ՝ պրոֆեսոր Մ. Ս. Սուբբոտին:
(հ.կ.) առ. 379. 100—60

ԲԺԻՇԿ

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկարարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Բարիշէվսկայա № 1.
առ. (ե.հ.կ.) 4. 100—63

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. Յ. ԳԱՐԱԿԻԻԼԵԱՆ

(Նախկին օգնական Կամայեվի)

Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը
Վելեմինսկայա փողոց № 4, բն. 3.
առ. (օ.մ.) 129. 50—43

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳԺՏՈՒԹԻՒՆԸ

Ինչո՞վ կը վերջանայ բալկանեան պետութիւնների մէջ առաջացած գըժտութիւնը:

Մ'էթէ մարդկութիւնը պէտք է հանդիսատես լինի նոր պատերազմի, որտեղ դէմ առ դէմ պէտք է կանգնեն իբրև թշնամիներ՝ եղբայրակից, երէկվայ օրը միմեանց հետ դաշնակցող, զինակից ժողովուրդները:

Ոչ ոք բարեացակամներից՝ չէ ուզում ընդունել մի այդպիսի անպատեհութիւն:

Բայց անշուշտ կան և դիւանագիտական շրջանակներ, որոնց համար ձեռնտու կը լինէին սերբերի և բուլգարների կամ սրանց և յոյների ընդհարումները միմեանց հետ:

Օրինակ՝ օսմանեան և մասամբ աւստրիական դիւանագէտները իրանց նպատակների համար կարող են նպաստաւոր նկատել բալկանեան պետութիւնների միջև ծագած գժտութիւնները:

Եւ ահա ինչ պատճառներով:

Թիւրքիայի համար, որը ներկայումս դեռ չէ մշակել իր հաշտութեան բոլոր պայմանները և չէ որոշել պատերազմական տուգանքների և ծախքերի խնդիրները, շատ շահաւէտ կը լինի տեսնել իր հակառակորդներին ճգնաժամային պայմանների մէջ, որպէսզի հնարաւորութիւն ունենայ աջողութեամբ սակարկել օսմանեան պարտքերի վերաբերութեամբ: Մենք չենք խօսում այլ ևս այն բանի մասին, որ Թիւրքիան, պատրաստի ունենալով Զաֆիաջայում մեծաքանակ զօրք, կարող է փորձեր անել և պատերազմական գործողութիւններ սկսելու սլաւոնների դէմ:

Աւստրիայի համար նպաստաւոր է սլաւոնական գժտութիւնը, որովհետև նա, օգտվելով դէպքից, կարող կը լինի իրագործել իր այն տենչանքը, որը նա ունէր վերջին բալկանեան պատերազմի տեւողութեան ամբողջ ժամանակը, այն է՝ իր զօրքերով գրաւել մի որևէ հող, օրինակ, Ալբանիան: Իսկ երբ մի անգամ գրաւված կը լինի մի հող թեկուզ ժամանակաւոր կամ պայմանական կերպով, նա դառնում է տրամադրելի և ապագայ նուաճողական նպատակների համար:

Ռուսական Կայսրի հեռագիրը, որը զգուշացնում էր սլաւոններին սխալ և անմիտ քայլերից, ունեցաւ մեծ ազդեցութիւն բալկանեան ազգերի մտքերի և տրամադրութիւնների վրա: Նոյն ոգով գործում են ֆրանսիական և անգլիական դիւանագէտները, համաբելով բալկանեան գժտութիւնը մի դժբաղդութիւն նորակազմ պետութիւնների համար:

Եւրոպական հասարակական կարծիքը յոյսեր է յայտնում, որ բալկանեան պետութիւնները կը վերացնեն իրանց անունը և պատիւը վարկաբեկող գժտութիւնը և հնարաւորութիւն կը տան քաղաքագէտներին աւարտել այս տարվայ պատերազմական գործողութիւնները այնպիսի վախճանով, որը համապատասխան լինէր պատմական նշանակութիւն ստացած անցքերի և փոփոխութիւնների էութեան:

Ա. Քալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅԵՐԻՑ

«Սովորական» դէպքեր.—Սպանութիւն, թալան, արտաղաթ.

Էրզրում, 31 մայիսի

Բուլանըկի շրջանում Համդաշէյխ գիւղի մօտ չերքէզները բազմաթիւ խմբով գործել են զինված յարձակում հայերի վրա: Սպանված է Տօնապետը: Ոճրագործները ազատ են:

Նոյն գիւղի շրջակայքում սպանված ինչ-որ թիւրքի համար կառավարութիւնը մեղադրելով հայերին՝ ձերբակալել է բազմաթիւ անձերի:

Նոյն շրջանի մօտ, Թեղուտ գիւղի վրա, քիւրդական մի հօրդա գործել է զինված յարձակում:

Էրզրումի մէջ թիւրք օֆիցէրները կէս-ժամվայ ընթացքում ծեծով սպանեցին մի քրիստոնեայ զինուոր: Նրա յանցանքը կայանում էր նրանում, որ բողոքեց իր օֆիցէրի դէմ, իրան «գեավուր» անարգական խօսքը ուղղելուն համար: Իշխանութիւնն այդ վայրենի դէպքի վրա ոչ մի ուշադրութիւն չը դարձրեց: Քննիչ բժիշկները՝ վախից ստիպված՝ յայտնեցին, որ մահը առաջացել է տիֆից (!?):

Էրզրումի «Գեավուր-բօղան» (հայ խեղդող) թաղամասում թիւրքերը փորձեցին պրովոկացիա սարքել: Բռնեցին Կիւրեղ անունով մի ծերուկ ռուսահպատակի ու բռնութեամբ փակեցին նրան մի թիւրքի տան մէջ, թիւրք տանտիրուհու հետ միասին: Ապա բարձրացրին աղմուկ: Հաւաքվեց մոլեռանդ խուժանը և փորձեց սպանել իբր թէ իսլամի պատիւը պղծող հային: Ոստիկանութիւնը հազիւ կարողացաւ ազատել խեղճին ստոյգ մահվանից: Այն հարցին, թէ ինչու ոստիկանութիւնը ևս անմեղ մարդուն ենթարկեց հրապարակային ծեծի ու անարգանքի, ոստիկանները պատասխանեցին.

— Ստիպված էինք, որովհետև պէտք էր մեղմել խուժանի զայրոյթը...

Անմեղ թիւրքուհու ամուսինը դիմեց ռուսական հիւպատոսարանին խնդրելով կամ իրան ուղարկեն Ռուսաստան և կամ արձանագրեն ռուսահպատակ:

Վարդօյի շրջանում համիդիէ բնաբաշի Ահմէդ էֆ. գործ է դնում հայերի վրա խիստ բռնութիւններ: Նոր գարնան նա գրաւել է բաւականաչափ արտեր: Բողոքողներին ծեծում է, չարչարում և ուզածի նման պատժում:

Կարաքիլիսէի մօտ թալանվեցին 3 հայեր:

Նոյն շրջանում համիդիէ գնդերի կազմակերպման գործը աշխոյժով առաջ է տարվում: Այդ մասին սուլթանից ստացվել է ֆերման ու կարգացվել քիւրդերին հրապարակով:

Բաղնոսի քիւրդերը եկել են Էրզրում ու ձեռնարկել մեծաքանակ զէնքերի և ռազմամթերքի գնման: Նրանց խօսքով, ընդհարումները արդէն ծայր են տուել թէ իրանց մէջ և թէ իրանց ու հայերի միջև:

Բիթլիսի Էրուն շրջանում Մահմատ Էմին աղան սաստկացրել է իր բռնութիւնները հայերի, նոյնպէս և նստակեաց խաղաղ քիւրդերի վրա: Հայ գիւղացիք փորձել են գիշերանց մասսայական խմբերով փախչել, թողնելով տուն, տեղ, արտ և ամեն ինչ: Աղան լսում է և բռնութեան տակ նրանց վերադարձնում է տուն կէս ճանապարհից: Նոյն շրջանից, մի գիւղացու ասելով, միայն մի տարվայ ընթացքում Մահմատ-աղան հայերից տուգանք է վերցրել աւելի քան 600 ռուբլի:

Բասենի Ալվար գիւղում քիւրդերը սպանել են մի թիւրքի, հեռուից կարծելով թէ նա հայ է:

Խրուշ գիւղում պատահել է զինված ընդհարում: Սպանվել են 2 հոգի: Կան վիրաւորներ:

Խնուսի դաշտից ստացված նամակները և նոր եկողները պատմում են բազմաթիւ թալանների, բռնութիւնների, առևանգումների մասին: Դաշտային աշխատանքները հայերի համար դարձել են բիսկի խնդիր: Գիւղից հեռու գնալը վտանգաւոր է: Ճանապարհները նոյնպէս վտանգաւոր են: Կարաչօբանի քիւրդ կառավարիչը հայերի վրա գործ է դնում անասելի ապօրինութիւններ:

Մայիսի 1—15-ը Էրզրումից Ռուսաստան են անց կացել օրինական անցաթղթով աւելի քան 500 հայեր: Փախստականների թիւը ևս մեծ է:

* * *

Տխուր դէպքերի ցանկը այսպէս կարելի է դեռ երկար շարունակել, բայց ես յոգնեցի, ես ձանձրացայ այս միօրինակ լուրերը ձեզ տեղեկագրելուց:

Անցնում են ամիսներն ու տարիները, և միշտ լուրերը բազմաթիւ և ըստ էութեան միշտ իրար նման են: Փոփոխվում է միայն ոճրագործի ու զոհի անունը, թալանողի կամ թալանված գիւղի անունը, և այսպէս անվերջ, անվերջ...

Քուրմ

Ց. Գ.—Այսօր հրապարակի վրա տեղի ունեցաւ խոշոր սկանդալ թիւրքերի և քիւրդերի միջև. սկանդալը իսկոյն փոխվեց լուրջ կռիւի: Երկուստեք ևս մասնակցեցին բազմաթիւ անձեր: Կան բաւականաչափ վիրաւորվածներ: Հայերը սարսափահար փակեցին խանութները և փախան:

Ֆ.

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԵՊՔԵՐԸ

(ԼՐԱԲԵՐԻ ՄԸ ՑՈՒՇԱՏԵՏՐԸ)

—o—

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(Վարչութեան անդամի մը և երեսփոխանի մը կարծիքը)

Բ.

Կ. Պոլիս, 20 Մայիս

Վարչութեան անդամներէ մէկուն այս ծանր յայտարարութիւնները լսելէ յետոյ, երեսփոխաններու մտածութեան ծանրութեան անհրաժեշտ կը դառնար։

Այս նպատակով ըրած դիմումս ապարդիւն չեղաւ, և ազգ. ժողովի ամենէն կարևոր անդամներէն մէկը ինծի հայկական խնդրոյն վրայ հետևեալը խօսեցաւ։

* * *

Ազգ. ժողովի դռնփակ նիստին մէջ վարչութեան ըրած յայտարարութիւնները չափազանց ծանրակշիռ էին։ Վարչութիւնը մեզի մատնանիշ ըրաւ վիճակ մը, որ իր նմանը չէ ունեցած։ Այս արտասովոր վիճակին հանդէպ դժբաղդաբար վարչութիւնը մինչև հիմա ոչէ արտասովոր միջոց չէր դիմած և զոհացած էր սովորական թակարիներով, որոնք գիտենք թէ ինչպէս նկատի կառնեն Բ. Դրան մէջ։ Սակայն վարչութիւնը որովհետև ըսաւ թէ դեռ ընելիքներ ունէր, բնական է թէ անկարելի էր անմարերութիւն ցոյց տալ, մանաւանդ որ վարչութիւնը իրը գործի տէրը մեկէ քիչ մը աւելի կրնար իրաձեկ ըլլալ և աւելի ձեռնհաս՝ որոշելու ժամանակը աւելի ազդու դիմումներ ընելու։ Հոս պէտք է աւելցնեմ, թէ վարչութիւնը ինքնին չեքանելով իր գործը և տակաւին մեզի խօսելով նոր դիմումներու մասին՝ կը ստանձնէր այս ամենածանր վիճակին մէջ պատասխանատուութիւն և կերևայ թէ բոլորովին յուսահատ չէր։ Ասոր համար ես համամիտ չէի զինքը հրաժարեցնել ուզողներուն։

Սակայն իրը երեսփոխան իմ վրաս տեսնելով ապատրութիւն ըրաւ, երբ վարչութիւնը իր այս ծրագիրները պարզած ատեն՝ անոնց արդիւնքին մասին թերահաւատ ըլլալը յայտարարեց։ Վարչութիւնն եթէ որոշապէս գիտէ, թէ իր դիմումներն ապարդիւն պիտի մնան, այսինքն ծանօթ է անոր՝ հետևանքը, այլևս ապարդիւն վախճանի մը համար պէտք չէր որ ձեռնարկներ ընէր, այլ ուրիշ միջոցներու դիմէր հայոց կեանքը, գոյքը և պատիւն ապահովելու համար։ Կառավարութիւնը կրնայ զսպել քիւրդերը և աւազակները եթէ ուզէ, ինչպէս Տէրսիմի մէջ արդեն եղած է։ Իբրահիմ-փաշան իր բոլոր ատենով և տեղով ընդհանուր ըրաւ զինուորական այժ գործածելով։ Վարչութենէն տեղեկանալու արդէն պէտք չունէինք, գիտնալու համար թէ կառավարութիւնն անկարող ըլլալէ աւելի կամեցողութիւն չունի և աւելի տրամադիր է քաջալերելու քիւրդերը, ամեն բան ընելու համար։ Հետևաբար ես, առանց գիտնալու թէ ինչ միջոցներու պիտի դիմէ վարչութիւնը, կրնամ այժմէն յայտարարել վստահաբար, թէ վարչութեան ընելիք դիմումներն ոչէ օգուտ չպիտի ունենան։ Եւ որովհետև վտանգը սպառնական է, ես կը փափաքէի, որ վարչութիւնն աւելի կարուկ ըլլար և երեսփոխանութիւնը քիչ մը աւելի անկաշկանդ ու աւելի յանդուգն։ Ընդհակառակն՝ իմ տպաւորութիւնս սա է, որ վարչութիւնը Արփիար Արփիարեանի որակած «շրջանայեաց խոհականութեան» ախտէն բռնուած՝ տարօրինակ մտավախութեան մը մէջ է և ծայրայեղ վերապահ դիրք մը կը բռնէ, և կարծես թէ եթէ հարկ ըլլայ՝ պիտի ուզանայ նոյնիսկ Պարիզի պատուիրակութեան հայերէ բաղկացած ըլլալը։ Վարչութիւնը ապահովաբար նոյնիսկ կառավարութեան առջև կը մերժէ ճանչնալ Պողոս-փաշա Նուպարի դիրքն ու պաշտօնը և Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ ինքնագլուխ զրկուած ըլլալն ալ այս պահել կը ձևացնէ։ Վարչութիւնը այս պարագային ինչով կը տարբերի Օրմանեան սրբազանէն, որ Լա-Հէյի խաղաղութեան ժողովին կաթողիկոսի կողմէ զրկուած պատուիրակները թիւրքահայոց ներկայացուցիչները չընդունիր յայտարարեց։ Այս պարագան դատապարտութեան արժանի արարք մը ըլլալուն համար պնդողներէն ամենէն գլխաւորը, Արիստակէս Գասպարեան, որ այսօր վարչութեան անդամ է, արդեօք ապագային իրենց այս վերապահումը ինչպէս պիտի արդարացնէ։ Եւ պէտք է նկատել, թէ այն ատենուան պայմաններուն և այսօրուան պայմաններուն միջև շատ մեծ տարբերութիւն կայ, թէ ներքին և թէ արտաքին տեսակէտով։ Այսօր համիդեան իշխանութիւն գոյութիւն չունի և Եւրոպայի դիւանագիտութիւնը իր սեղանին վրայ, առանց մեր մասնակցութեան, արդէն հայկական խնդիր մը ունի։

Մենք՝ Թիւրքոյ հայերս՝ ամենէն աւելի իրաւունք ունինք ազմուկ հանելու, բայց, դժբաղդաբար, լուռ կեցած ենք։ Ես կը խորհիմ թէ հարկ է, որ թոթափենք մեր վրայ ճնշող մտավախութիւնը և այս սպառնական վիճակին առջև ծառանանք ու բողոքի ձայն բարձրացնենք։ Մեր լռութիւնը մեզի կը վնասէ պարզապէս։ Սուրբոյ մէջ արաբական պզտիկ շարժում մը անմիջապէս վարձատրուեցաւ, և կառավարութիւնը, տեսանք թէ, ինչպէս լեզուական խնդրոյն մէջ զիջում ըրաւ արաբներուն։ Անդրադարձէք անցեալին և պիտի տեսնէք, թէ ինչպէս ոչինչէն ստեղծեց մեր նախորդ սերունդը՝ հայկական խնդիրը։ Քանի մը ոչխարներու թալանը և երկու հասարակ ոճիր՝ անոնք շատ լաւ ծառայեցուցին ստեղծելու համար 1878-ին հայկական հարցը, մինչ մենք մեր ետին ունենալով 300,000 զոհերու արեան բողոքը, սահմանադրական շրջանի մէջ կատարուած Ադանայի 20,000 զոհերը, և ամեն օր կանոնաւորապէս կատարուած թալանի, առանձնութեան և սպանութեան դէպքերը՝ կը վարանինք բողոքի ձայն բարձրացնելու, ենթարկուած՝ տարօրինակ մտավախութեան մը, որ վատութեան կընայ մօտենալ։ Ես ձեզ կընամ ապահովել թէ՝ «շրջանայեաց խոհականութեան» կուռքերը և նախորդ սերունդին պահպանողականները հարատուած Մաքսուտ Սիմոն-բէյերը և Ունճեան Արփիները՝ եթէ ողջ ըլլային, արդի պայմաններուն մէջ մեկէ աւելի յանդուգն ու մեկէ աւելի խիզախ պիտի ըլլային։

Երեսփոխները, ինչպէս վարչութեան յայտարարութիւններէն հասկցուեցաւ, երևակայածէն ծանր է, և մեր բնաջնջումը որոշուած է, եթէ թոյլատրուի։ Քանի որ մեր մահը ստոյգ է, ազգի մը վայել է, որ գոնէ պատուաւոր մեռնի, և պատուաւոր կերպով մեռնիլ գիտցող ազգի մը ընթացքը չէ մեր բռնած ուղղութիւնը։ Պէտք է որ վարչութիւնը և ազգ. ժողովը ձայն բարձրացնեն և դիմեն ուր որ կրնան։ Քանի որ թիւրքերը ազգերի և Միջին Ասիայի, այսինքն Պարսկաստանի և Հնդկաստանի արևելեան ազգերի։ Հայ ժողովուրդը, որ մարդկային սեռի որբանի մօտ Արարատ լերան շուրջն ունի իր ընակութիւնը, Քրիստոսի ծնունդից առաջ Առաջաւոր և Միջին Ասիայում ապրող մեծամեծ տէրութիւնների հետ մշտական կեանքի կռիւ մէջ էր։ Ասորեստանցիք, պարսիկները, մակեդոնացիք՝ Ալէքսանդր Մեծի և նրա յաջորդների օրով և աւելի վերջը աշխարհին տիրապետող հռոմայեցիք հետամուտ էին աւելի կամ նուազ աջողութեամբ իրանց գերիշխանութիւնը ազգով հպատակ հայերի վրա տարածել։ Բայց այդ նրանց չաջողվեց։ Ասիական ազգերից շատերն անհետացան. յիշենք միայն ժամանակով այնքան հզօր բաբելօնացիներին, ասորեստանցիներին, արօյացիներին և Փոքր Ասիայի մէջ ժողովուրդները։ Հայ ազգը սակայն, շնորհիւ, ասես մի վերնախնամ տեսչութեան, պահպանվել է դեռ մինչև այսօր։

Կաթոլիկ եկեղեցու աւանդութիւնը ուսուցանում է, որ հայերի մէջ Աւետարանը քարոզել են ս. Բարդուղիմէոն և Թադէոսը։ Կասկածից դուրս է, որ քրիստոնէութեան արդէն առաջին ժամանակներից բազմաթիւ քրիստոնեայ հայեր կային, բայց միայն չորրորդ դարի սկզբում ամբողջ հայ ժողովուրդը Տրդատ թագաւորի հետ միասին ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով կաթոլիկ քրիստոնէութեան դարձաւ։ Հայ եկեղեցին՝ հակառակ արիւնահեղ հալածանքներին, որ նրա վրա յարուցին հինգերորդ և վեցերորդ դարերում պարսիկ թագաւորները, իր կաթոլիկ քրիստոնէութիւնը պահպանել կարողացաւ։ Այդ ժամանակներում նա աստուածաբանական գիտութեամբ հարուստ մի կեանք ունէր։ Ասիոս որ ազգային, քաղաքական վէճերը, որ հայերը ունեցան այն ժամանակի արևելեան հռոմէական կայսրութեան հետ, յանգեցին այն հետևանքին, որ նրանք 552 թ. մերժեցին Քաղկեդոնի ժողովի որոշումները և ընդունեցին միաբնակութեան վարդապետութիւնը։ Այդ միաբնակական պառակտումների հետևանքով իսլամը իր յաղթական ընթացքն առաւ արևելահռոմէական կայսրութեան դէմ և քրիստոնէական երկիրներ կարից նրանից։ Եւ հէնց այդ իսլամից հայ եկեղեցին և հայ ժողովուրդը սոսկալի աղէտներ են կրել մինչև մեր օրերը։

Հռոմի պապերը Արևելքում կաթոլիկ եկեղեցու միութիւնը վերականգնելու համար՝ հայ եկեղեցու և հայ ժողովրդի մեծ նշանակութիւնը ամեն ժամանակ արժանապէս ճանաչել են։ Մանաւանդ Գրիգոր Է. փառաւոր պապը իր հեռանկար տեսութեամբ ջանացել է միացնել հայերին կաթոլիկ եկեղեցու հետ։ Այդ ժամանակում հայերի եկեղեցապէս միութիւնը ս. Աթոռի հետ նախապատրաստվեց։ Խաչակրութիւնները, որոնք իրանց ծագումը գլխաւորապէս ս. Աթոռի նախաձեռնութեանն են պարտական, Կիլիկիայի արևելեան մասում հայկական մի անկախ պետութեան վերահաստատութիւնը գլուխ բերին։ Քանի որ կաթոլիկ խաչակիրների բանակների կողմից Փոքր-Ասիայի և Ասորիքի սահմանների գրաւումը տեսում էր, այդ հայկական թագաւորութիւնը, որ յարվել էր կաթոլիկութեան, կարողացաւ իրապէս պահպանվել։ Բայց երբ ֆօն Հօհէնշթաուֆէն Ֆրիդրիխ Բ. կայսրի տարաբաղդ քաղաքականութեան շնորհիւ հռոմ-գերմանական կայսրութիւնը փոխանակ ս. Աթոռի և միւս քրիստոնեայ իշխանությունների հետ միաբանութեամբ ձեռք առնելու և ոչնչացնելու մահմէդական թագաւորութիւնները, ձեռնամուխ եղաւ իսլամի հետ միասին ս. Աթոռը խոտորելու, հայկական կաթոլիկ թագաւորութիւնը ասպետական կարգերի և խաչակիրների հետ մէկտեղ Փոքր-Ասիայից վերացաւ։ Նոյնիսկ օսմանական թիւրքերն էին, որ 13-դ դարի կէսին բռնացան Հայաստանի վրա և այնտեղ նախկին հայկական և դրացի սելջուկեան թագաւորութիւնների փոխանակ իրանց պետութիւնը հիմնեցին։ Այդ ժամանակից Հայաստանը մնում է թիւրքական տիրապետութեան տակ։ Հայերի հին մայր երկիրը ասպատակութեամբ միջոցներ են եղել քիւրդերն էլ, ասիական մի մահմէդականացած ժողովուրդ։

Երբեմն հայկական պետութեան տարածութեան վրա հայերն այժմ բնակչութեան միայն մի երրորդ մասն են կազմում։ Սակայն սրանք գլխաւորապէս միաբնակութեան վարդապետութիւնը դաւանողներն են։ Մահմէդականները, ինչպէս որ Ալբանիա մեծագոյն մասում ներկայումս, Հայաստանում ևս բացարձակ տիրապետող դասն են կազմում և սոսկալի կերպով ճնշում են հայերին, որոնք առաւելապէս հոզագործներն են և մանր քաղաքացիք։ Ռուսաստանը 1829—1877-ի պատերազմներում Հայաստանից նշանաւոր կտորներ կցեց իր պետութեանը։ Կաթողիկոսը, միաբնակ հայերի այդ եպիսկոպոսապետը, նստում է Էջմիածնում ռուսական սահմանի վրա։

Կրօնական այդ պէս-պէս դաւանութեան հետևութեամբ է անշուշտ, որ այն պետութիւնները, որոնք ոչ-կաթոլիկ եպիսկոպոսական պետական եկեղեցի ունեն, այն է՝ Ռուսաստանն և Անգլիան, նշանաւոր ազդեցութիւն են անում արևելեան հերձակալների վրա։ Քանի որ Ռուսաստանն և Անգլիան Թիւրքիայում իրար դէմ կեցած կային, Հայաստանն և հայ բնակչութիւնը խաղաղդակ էր դարձած անգլիական նենգութիւններին։ Անգլիան էր 1895 թ-ին հայկական մի մեծ խլրտում հանդէս բերողը, որի նպատակը որպէս Թիւրքիային, այնպէս և Ռուսաստանին վնասելն էր։ Մենք բոլորս գիտենք, որ Փոքր-Ասիայի ըստ մեծի մասին բոլորովին անպարտ հայ բնակչութիւնը սոսկալի կերպով տուժեց այդ նենգութիւններից։ Նախորդ սուլթան Աբդիւլ-Համիդը ի զուր չէ կրում «կարմիր սուլթան» անունը։ Նա հայերի համար մի բոլորովին հանմանման արեան բաղանիք սարքեց, որպէս հնարը՝ հինգերորդ և վեցերորդ դարերում՝ պարսիկ թագաւորները, երբ հետամտեցին հայ եկեղեցին և հայ ժողովուրդը արմատից խլել, բնաջինջ անել։

Ափսոս սակայն՝ որ միացեալ կաթոլիկ հայերն էլ, վերջին տասնամեակում, յաճախ ստորացան՝ քաղաքական դաւերին խաղալիք լինել Թիւրքիայում։ Դեռ ամենի յիշողութեան առաջ է միացեալ հայերի ընդդիմադարձութիւնը Վատիկանեան ժողովին և Հասունեան պատրիարքին։ Իրաւ է թէպէտ որ այդ ընդվզված հայ կաթոլիկների մեծ մասը զղջումով վերադարձաւ կաթոլիկ եկեղեցին։ Բայց դարձեալ վերջին տարիներս երիտասարդ թիւրքերը անհաւատալի կուրութեամբ օրինապահ հայ կաթոլիկներին հետամտել սկսեցին։ 1911 թ-ին յայտնապէս ընդվզվեց Կ. Պոլսում հայ կաթոլիկ եկեղեցական համայնքը ընդդէմ Թերզեան պատրիարքի, այնպէս որ ս. հայր Պիոս Ժ.-ը հարկադրվեց նուիրագործ յարգելի կարդինալներին, որոնք ժպրհեցին կաթոլիկ պատրիարքութեան վարչութեանը մի-ջամուխ լինելու, բանադրանքի ենթարկել։ Հայ եպիսկոպոսները արդէն նախուստ հովուական թղթերով զգուշացրել էին կաթոլիկ հայերին ժողովրդավարական նորագոյն տեսութիւնները եկեղեցու վարչութեան մէջ մուծանել ուզելուց։

Աւստրօ-Ունգարիան կաթոլիկ եկեղեցու պաշտպան պետութիւնն է Թիւրքիայում։ Մեր կայսրութիւնը իրը յատկապէս կոչված մէկն է՝ պատսպարել Թիւրքիայում հայ-միացեալ եկեղեցին։ Աւստրօ-Ունգարիայի հայ կաթոլիկների պարքն է՝ ներգործել Կ. Պոլսում հայ կաթոլիկ եկեղեցական համայնքի վրա, լուսաւորելով ու վերանորոգելով։ Իրօք շատ բան է կախված հայ ժողովրդի ապագայ քաղաքական զարգացումից։ Բերլինի համագումարի որոշումների հիմունքով Հայաստանն իրաւունք ունի այդ բանի վրա, որ Թիւրքիայի այն մասերը, ուր բազմամարդ ընակութիւն ունեն հայերը, առանձին ինքնավարութիւն ստանան։ Թիւրքիան բնականապէս հետաքրքրութեամբ կը հետևի Հայաստանը մեզի չուզեր լսել, քանի որ մեր կեանքի, պատիւի և գոյքի պաշտպանութեան նախնական պարտականութիւնը չուզեր կատարել, մենք պարտաւոր ենք դիմել հոն, ուր որ կրնանք։ Դիմելու ենք քաղաքակիրթ աշխարհին և համայն մարդկութեան։ Վարչութիւնը միշտ ժամանակ ուզելով ազգ. ժողովէն՝ ծանր պատասխանատուութիւնը կը ստանձնէ, վասնզի ես կը վախնամ, թէ երբ օր մը աղաղակ բարձրացնելու ժամը հասած կարծէ, արդէն ոյժ մնացած պիտի չըլլայ։ Հետևաբար ես այս սպասողական վիճակին շարունակման շատ համամիտ չեմ, և հակառակ անոր որ կուսակից եմ վարչական տպնապ առաջ չբերելու, եթէ, մերձաւոր ժամանակի մէջ, վարչութիւնը դարձեալ իր այս անշարժութեան մէջ տեսնեմ, ես ալ պիտի փափաքիմ, որ տապալի և ուրիշ մը կազմուի, որ իր մէջ աւելի կորով ունենայ։ Բ. Դրան հանդէպ աւելի կորուկ դիրք մը բռնելու։

Հայորդի

ՄԻ ԵՐԵԿՈՅԹ ՎԻԼԼՆԱՑՈՒՄ

Հայկական հարցը ներկայումս մեծ կարևորութիւն է ստանում, և յուսալի է, որ Եւրոպան պատշաճ դատի այլևս սոյն կարևոր հարցի մասին էլ անպայման մի աղող վճիռ տալու։ Էլ բաւական է. թող մի անգամ ընդ միշտ վերջանան հայի հառաչանքն ու նրա դարաւոր ցաւը։ Եթէ հայկական հարցը՝ աբուլեխան խնդրի հետ իրը մի անհրաժեշտ նրա յարակից խնդիր՝ այս անգամ էլ նորից Եւրոպայի նկատողութիւնից վրիպի, ինչպէս ուրիշ պատեհ առիթներին, դա արդէն պիտի լինի հայի համար ամենայուսահատական վիճակը, և այնուհետև էլ չանկալենք, որ որևէ առիթ հանդիպի սրա նման յարմար, որի մէջ կարող լինի հայկական հարցն իր վերջնական լուծումն գտնել։

Սակայն մենք ուրախութեամբ պէտք է ասենք, որ Եւրոպայի ինտելիգենտ դասակարգը սոյն հարցի մասին բաւական լուրջ եզրակով զբաղվում է յայտնում պարբերական թերթերի մէջ, և նրանք, որ քաղաքականօրէն մի գործօն դեր են կատարում և քիչ շատ հայ տարրին իրանց համակրանք են տածում, արդէն խաղաղօրէն ձեռնարկում են առանձին խմբակներ կազմելու և հառաչասութիւններ տալու ի նըպաստ հայ ազգի ազատագրութեան։ Ուստի յուսալի է, թէ այսու կարող պիտի լինեն կառավարութեանց ուշադրութիւնը գրաւել, և հայկական հարցն այժմէութեան լուծվելիք խնդիրներից ամենակարևորագոյններից մինը համարել։ Քանի որ արևելեան հարցը հրապարակի վրա է իր ամբողջ կէտերով աւելի հրատապ, քան երբէք եղած էր, մեթէ կարելի է անուշադիր թողնել սրա ուղղակի կից՝ հայկական հարցը։

Մայիսի 25-ին Վիէննայի մէջ էլ գումարվեց նոյնպէս յատուկ մի մասնախումբ ճառախօսութիւններ անելու հայկական հարցի մասին. մի գովելի ձեռնարկութիւն. և յոյս ունենք, որ սա առաջին անգամը լինելով՝ դեռ պիտի շարունակվի ուրիշ անգամներ էլ։

Ճառախօսութիւնները տեղի ունեցան Շէպրէան կայսերական ամարանոցի Լավաշէք պավիլիօնի մէջ։ Երեկոյթի նախագահն էր գօպ. Շայնֆլուվ՝ Leo Geselschaft-ի վարիչը։ Գօպ. Շայնֆլուվ մի քանի խօսքերով բացատրեց ունկնդիրներին, թէ ինչ բանի շուրջ պէտք է դառնան երեկոյթի ճառախօսութիւնները, ապա բեմ հրաւիրեց ընութեամբ մի վաւրուն երիտասարդ ճառախօս, որ թէև ընիկ աւստրիացի, բայց ծագմամբ հայ է, Ֆրայէր Մ. Կապրի։

Ֆ. Կապրի, որ վաղուց հետամուտ եղել էր հայկական հարցի խնդիրներով, այս անգամ էլ մեծ յօժարութեամբ ընդունեց հրաւէրը և ելաւ բեմ՝ հայ ազգի ազատութիւնը պաշտպանելու։ Ճառի նիւթը առած էր հայ ազգի պատմութիւնից, բայց մասնաւորաբար նրա ջարդերի ահռելի պատմութիւնից։ Ֆ. Կապրի խօսեց հայի կրակոտ ու ցաւոտ սրտի լիհանչիւն շեշտերով, որ և բոլոր ներկայ եղողների վրա շատ մեծ տպաւորութիւն գործեց. մի առ մի հայի կրած տառապանքները ցուցադրելուց յետոյ, այս եզրակացութիւնը ունեցաւ Ֆ. Կապրի, որ մշտաշարաշար հայ ազգը իրապէս ներկայումս կարօտ է Եւրոպայի աջակցութեան, և կը յուսանք, թէ Եւրոպան պիտի չը զլանայ իր աջակցութիւնը, նոյն իսկ յանուն ազատութեան, մարդկային եղբայրութեան և սիրոյ, անհրաժեշտաբար ապահովել հայ ազգի կեանքը, պատիւն ու գոյքը։

Ֆ. Կապրիին հետևեց հ. Գ. Մէնէվիշեան և կարդաց իր գրած ճառը ոչ նուազ ոգևորութեամբ, ուր մասնաւորապէս շեշտում էր, որ եթէ նոյն իսկ Թիւրքիան բարի կամքով դիւրութիւն ունենայ բէֆորմներ մացնելու հայ գաւառների մէջ, այնու ամենայնիւ նա անկարող է այդ գլուխ բերել, և հարկ է, որ Եւրոպայի հսկողութեան տակ լինի այդ, և այն ժամանակ միայն կարող ենք ասել, թէ ապահով կը լինի բէֆորմների գործադրութիւնը։

Ապա ճառախօսեց նաև մի մօնսէնիեօր՝ Էօժէն Պէօկլին. սրա ճառի իսկական իմաստը սա էր բովանդակում, որ հայերը պէտք է մի քիչ համբերեն, և ես յոյս ունեմ, որ մի քիչ ժամանակից յետոյ՝ անպատճառ պարագաները փոխվելու են. այն ժամանակ հայի համար աւելի շահաւէտ կը լինի։ Բայց թէ սրանով ի՞նչ էր ուզում մեզ հասկացնել մօնսէնիեօր Պէօկլէն, իրա միտքը չը բացատրեց։

Ճառախօսութիւններին յաջորդեց խօսակցարար բանավէճեր այս հարցի մասին, որ, մեր կարծիքով աւելի լաւագոյն պիտի լինէր, եթէ ընաւ տեղի չունենային այդ խօսակցութիւնները։ Զրոյնհետև այդպիսի պարագաների մէջ շատ ընական է, որ իրար հակառակ կարծիքներ ու տարաձայնութիւններ տեղի ունենան, որով լաւ տպաւորութիւն չը թողեց ներկայ հասարակութեան վրա։

Բայց հարկ է, որ ասենք, թէ առ հասարակ երեկոյթի ընդհանուր խանդավառութիւնը լաւ էր, և ունկնդիրներից իւրաքանչիւր ոք մի արտակարգ ուրախալից հրճուանքի մէջ էր ինքն իրան զգում։ Երեկոյթին բացի քաղաքիս փոքրիկ հայ գաղութից ներկայ էին և բազմաթիւ գերմանացիներ, ի միջի այլոց հայագէտներ. այսպէս՝ կայսերական գրադարանի երկրորդ մատենադարանապետ դօկտ. Գրեվից և Գայնց ու ուրիշ զանազան թերթերի խմբագիրներ ամենայն հետաքրքրութեամբ ուշ էին դնում հայ ազգի պատմութիւնը և հայի չարքաշ ընութիւնը, որ այդպիսի անհպատաս պարագաների տակ տակաւին կենսունակութիւն է ցոյց տալիս և զարգացման ատակ, քան իրան բաղդակից ուրիշ որևէ հին ազգ։ Երեկոյթին ներկայ էին գտնվում նաև Մխիթարեաններից՝ բացի հայր Գ. Մէնէվիշեանից՝ մի քանի ուրիշ հայրեր էլ. այստեղ էր նաև մեր համակրելի հանրածանօթ ճարտարապետ Թ. Թորոմանեան, իսկ պօլսահայ մտաւորական դասից Զ. Սուրէնեան։

Ժամը 11-ն էր, երբ ճառախօսութիւնը վերջացաւ, բազմութիւնը համակրալից ցոյցերով ցրվեց՝ հայ ազգի ազատագրութեան սիրուն յոյսերով պարուրված։ Իցէ՞ թէ այդ այդպէս լինէր։

Զերդասօլ

Վիէննա, 27 Մայիսի

Հ. Յ. Տէր-Ոսկանեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Դրբ.)

4 Յունիսի

Պետերբուրգ.—(Պաշտօնական)։ Նոցին Մեծութիւններ Թագաւոր Կայսրը և Թագուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան Գահաժառանգի և Օգոստափառ Դուստրների հետ միասին այսօր բարեհաճեցին Ցարսկոյէ-Սէլօյից տեղափոխվել Պետերհօֆ։

—

Պետերբուրգ.—(Պաշտօնական)։ Բարձրագոյն բեսկրիպտ յանուն արտաքին գործերի մինիստր-հօֆմէյստեր Սազոնովի.

«Սերգէյ Դմիտրիեվիչ! Գերմանական Կայսրի եւ Բերլինի ազգաբնակութեան Ինձ ցոյց տուած սրտագին ընդունելութիւնը եւ անգլիական թագաւորի հետ ունեցած բարեկամական հանդիպումը առանձնապէս ուրախալի էին Ինձ համար, որովհետեւ Ես կարող եղայ դրանց մէջ, բացի հին բարեկամութիւնից, տեսնել միակերպ մտածողութեան արտայայտութիւն ներկայ րոպէի եւրոպական քաղաքականութեան գլխաւոր հարցերի վերաբերութեամբ իբրեւ հաստատուն գրաւական՝ ապահովելու բոլոր ժողովուրդների բաղդաւորութեան համար այնքան հարկաւոր խաղաղութեան բարիքները։

«Ընդունելով, որ բալկանեան դէպքերի պատճառով ձեր վրա ընկած դժուարին գործունէութեան մէջ դուք ոչ միայն իրագործեցիք ամբողջապէս Իմ սիրելի Ռուսաստանի շահերի Ինձ թելադրված ցուցումներից իւրաքանչիւրը, այլ եւ կարողացաք խորաթափանց, սեփական մտքերի պատշաճութեան հետաքրքիր ու դէպի հարցերից ամեն մինը տուած բարերիրոնց վերաբերմունքով առաջ բերել յարգանք ու վստահութիւն լուրջ ու բարդ խնդիրների միջազգային լուծման մասնակցողների կողմից—բոլորից անխտիր, —Ես Իմ պարտականութիւնն եմ համարում արտայայտել ձեզ Իմ անկեղծ շնորհակալութիւնը։

«Մնում եմ ձեզ մշտապէս բարեհաճ։

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրված է՝

«Եւ ձեզ յարգող ՆԻԿՕԼԱՕ»։

Ցարսկոյէ-Սէլօ, 3 յունիս, 1919 թիւ։

Պետերբուրգ.—Եկաւ յունաց թագաւորաղն Նիկոլայը։

«Ст. Молва» և «Руль» թերթերում յունիսի 2-ին տպված էր՝ թէ յունիսի 1-ի երեկոյեան ներքին գործերի մինիստրը այցելեց կոմս Վիտտէին և նրա հետ ունեցաւ 4-ժամեայ խօսակցութիւն։ Տեղեկատու բիւրօն լիազօրված է յայտնելու, որ ներքին գործերի մինիստրը 1913 թ. սկզբից կոմս Վիտտէի հետ չէ հանդիպել և ոչ մի զրոյց նրա հետ չէ ունեցել։

—

Մոսկվա.—Եկան իտալական պատգամաւորութեան անդամները և ընդունվեցին քաղ. վարչութեան, բօրսային կոմիտէի և իտալական գաղութի ներկայացուցիչներից։

—

Կ. Պոլիս.—Նոր կաբինէտի կազմը. մեծ վէզիր և արտաքին գործերի մինիստր՝ Սայիդ-Հալիմ-փաշա, շեյխ-իւլ-իսլամ՝ Մեհմէդ-Էսադ-Էֆէնդի, պետական խորհրդի նախագահ՝ Հալիլ-բէյ, ներքին գործերի մինիստր՝ Թալէաթ-բէյ, զինուորական՝ Իզզէթ-փաշայ, ծովային՝ Ջիւրիւք-Սուլու-Մահմուդ-փաշայ, արդարադատութեան՝ Իբրահիմ-բէյ, ֆինանսների՝ Ռիֆաատ-բէյ, ժող. լուսաւորութեան՝ Շիւքրի-բէյ, առևտրի՝ Սուլէյման-Բասանի, հասարակական աշխատանքների՝ Օսման-Նիզամի-փաշայ, վակուֆների՝ Խայրի-բէյ և պօստային՝ Ոսկան-Էֆէնդի։

—

Լօնդօն.—Արտաքին գործերի ստատսեկրետարի երկրորդ օգնական սըր Լուի Մալլէտը նշանակվեց դեսպան Կ. Պոլսում։

Սուֆրաժիստուհի Պանդէրստը արձակ ազատվեց Գոլովէյի բանտից։ Սուֆրաժիստուհիների միտինգում բողոք յայտնվեց նրան երկրորդ անգամ բանտ դնելու դէմ։ Որոշվեց ագիտացիա մղել լիբերալների թեկնածուի դէմ իբրև բողոք կառավարութեան քաղաքականութեանը։

Պարլամենտի իրլանդացի անդամները Բէդֆոնդի գլխաւորութեամբ Գլազգոյում կազմեցին մեծ միտինգ յօգուտ հօմրուլի։

Լօնդոնդերրում և Դրօգէդում շոգենաւերի վրա գրաւեցին դարձեալ հրացաններ։

Վանկուվէրում հնդկական միտինգին մի բանաձև է ընդունվել, որով պահանջվում է Ռայլ ասլ հնդիկներին բնակվել Կանադայում։ Միտինգին մասնակցողները ասել են, որ ստեղծված դրութիւնը վայել չէ բրիտանական բարքերին և ամօթաբեր է Հնդկաստանի, Կանադայի և բրիտանական պետութեան համար։

—

Պարիզ.—Պատգամաւորների պալատում Վալիանօն առաջարկեց արձակել պալատը, որպէսզի ընտրողները հնարաւորութիւն ունենան իրանց կարծիքը յայտնել զինուորներին չարձակելու և երեքամեայ զինուորական ծառայութեան հարցերի առիթով։ Առաջարկութիւնը մերժվեց 412 ձայնով ընդդէմ 149-ի։

Ապա պալատը 381 ձայնով 189-ի դէմ որոշեց դիմել երեքամեայ զինուորական ծառայութեան օրինագծի յօդուածային քննութեանը և մերժեց 499 ձայնով ընդդէմ 72-ի Վալիանօյի հակառնախագիծը՝ վերաբերեալ միլիցիա կազմակերպելուն։

—

Բերն.—Ազգային խորհուրդը հարց տուեց դաշնակցական խորհրդին՝ թէ ինչ նպատակով են արված Գերմանիայի ռազմի պատրաստութիւնները Բաղէլից դէպի հիւսիս։ Դաշնակցութեան նախագահը պատասխանեց, որ այդ պատրաստութիւնները ուղղված չեն Շվեյցարիայի դէմ և չեն հակասում 1815 թ-ի Պարիզի պայմանագրին, սակայն դաշնակցական խորհուրդը աչքից չի թողնի ստեղծված դրութիւնը։

—

Միլան.—Համաձայն բանաւորական միութիւնների գեներալ-խորհրդի վճռի յունիսի 3-ին կայացաւ բանաւորական ընդհանուր գործադուլ՝ գործադուլին մասնակցած մի քանի բանաւորների դատապարտելուն պատճառով։ Բացի բանաւորներից, գործադուլին, որ ընդունեց մեծ չափեր, միացան նաև էլեքտրաշարժի վարիչները, որի պատճառով էլ էլեքտրաշարժի երթևեկութիւնը դադարեց։ Տեղի ունեցան մի շարք ընդհարումներ գործաթողների ու ոստիկանութեան և օգնութեան կոչված հեծելազօրի միջև։ Մի օֆիցեր վիրաւորվեց դանակով, մի քանի զինուոր վիրաւորվեցին ձեռնափայտերի և քարերի հարուածներից։ Կատարվեցին շատ ձերբակալութիւններ։ Երեկոյեան դէմ հանգստութիւնը վերականգնվեց,

Շատ արդիւնաբերական հաստատութիւններում աշխատում են։ Գործաթողները փորձեցին կանգնեցնել էլեքտրաքարշը, բայց զօրքերը ցրեցին նրանց։

—

Բուդապեշտ.—Բացվեց կանանց ընտրողական իրաւունքի պաշտպանների համաշխարհային դաշնակցութեան կօնգրէսը։

—

Սօֆիա.—Վերջին տեղեկութիւնների համաձայն, երկրաշարժը զգալի վնաս է պատճառել Սէլիվրում և Կաբլօվում։ Դժբաղդութիւնը մեծ չափեր է ստացել Տըրնօվօյում, ուր մասամբ քանդվել են հիւանդանոցը, կայարանը, զօրանոցները, տղայոց և օրիորդաց գիմնազիաները, քաղաքային տունը, վեց եկեղեցի. երեք եկեղեցի բոլորովին փլվել են։ Փլատակների տակից հանել են 127 վիրաւորի և 21 դիակ։ Մի ուրիշ տեղում հանվել են 27 դիակ։ Կառավարութիւնը մթերքներ ուղարկեց Ռուշչուկից, Պլէվնայից ու Շումլայից և սանիտարական խմբեր այդտեղից ու Ռուշչուկից։ Առաջին հերթին յատկացված է 40,000 ֆրանկ։

—

Թէհրան.—Լուրերի համաձայն, Էնզէլիում կալանաւորվել են Սալար-ուդ-Դօվլէի զինուորներից մի քանիսը։ Սարկաւագ Թաւրիզ եկող Թիւրքիացի հայ Գարեգին դրաշարի մասնան պարագան, որ զոհ եղաւ աւտօմօբիլի խորտակման ժամանակ Զուլֆա-Թաւրիզ ճանապարհի վրա։ Առաջնորդ Մելիք-Թանգեան ըղձքել է ռուսաց հիւպատոսին և պահանջել աւտօմօբիլի վարչութիւնից դրամական տուգանք զոհի որբերի և այրու համար։ Առանց պարսից իշխանութեան միջամտութեան հարցը բաւարար լուծումն առացաւ, յատկացվելով վարչութեան կողմից 600 բուբլի որբերին տրվելու համար։ Ցիշեալ դումարը հիւպատոսարանի կողմից յանձնվեց թեմական Մելիք-Թանգեանին, որ ուղարկեց զոհի որբերին։

Նորընտիր թեմական խորհուրդը սկսել է իր գործունէութիւնը։

Թեմական խորհրդին կից ընտրվեց և մի այլ մարմին՝ ուսումնական խորհուրդ՝ հետեւեալ 3 անձերից բաղկացած։ Գէորգ Զիլինկիրեան, Կարապետ Պիօնեան և Նիկոլա Տէր-Յովհաննիսեան՝ թեմ. խորհրդի քարտուղարը։

Ուսումնական խորհրդի իրաւասութիւնը սոսկ կրթական է, և նրա իրաւունքը՝ սկսած Թաւրիզի կրթական հաստատութիւններից՝ տարածվում է Ատրպատականում գոյութիւն ունեցող ուսումնարանների և ուսուցիչների վրա։

Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԼՐԱՑՈՒՄ

«Մշակի» № 118-ում զետեղված «Դպրոցական ֆոնդը» խորագրով յօդուածը առիթ տուեց ինձ գրելու հետեւեալը՝ որպէս լրացում այդ յօդուածում արտայայտված բարի ցանկութեան, յօգուտ դպրոցական ֆոնդի բարեյաջող հանգանակման։

Մենտոր-Միրաժը, նկատի ունենալով Թուրքեստանի հայ գաղութների ժողովրդի հոգեբանութիւնը և լոգիկան, միանգամայն յոռետես է հանդիսանում, որ տեղական «յանձնախմբերը» կարող են որեէ զգալի արդիւնք ձեռք բերել, ուստի այդ տեսակէտից ամենագործնական և խելացի է համարում Վեհափառ Կաթողիկոսի հրահանգով աշխարհիկ և հոգևոր 2-3 անձերից բաղկացած մի պատգամաւորութեան այցելումը իրանց շրջաններում և նպաստ դրպրոցական ֆոնդի գանձման։

Բայց մենք աւելին կասինք։

Մի տարի դպրոցական ֆոնդի գաղափարը արծարծելով հանդերձ՝ չը տուինք այն, ինչ որ կարելի էր սպասել մի տարվայ անդուլ աշխատանքից. մի աշխատանք, որ պարտաւոր էր կատարելու ամէն մի գիտակից անտամ. սակայն մենք, փոխանակ համախմբվելու, ընդհակառակը զբաղվեցինք անտեղի վէճերով և այդպիսով նեմացրինք մեծ ոգների յաւերժացման ակուռ։ Մինչ այսուհետև էլ կարելի է յոյս դնել մեր ինտելիգենցիայի, մանաւանդ Թիֆլիսի ինտելիգենցիայի վրա, որի անմիտ հակառակութիւնները ստիպեցին Դ. Զալիսուչեանին որակելու մեզ՝ որպէս «անմիտ վէճերով» զբաղվող մի հասարակութիւն, որը մեծ խոչընդոտ է հանդիսանալու գործի աջողութեամբ պսակվելուն։

Անշուշտ այդպիսի հասարակութեամբ է շրջապատված Անդրկասպեան երկիրը, որ Մենտոր-Միրաժը յոռետեսութիւն է արտայայտում մամուլով. թէև յօդուածագրի յոռետեսութիւնը մասնաւոր ընոյթ է կրում, այնու ամենայնիւ մենք վստահօրէն կարող ենք այդ յոռետեսութիւնը ընդհանրացնել նաև մնացեալ վայրերի ազգաբնակութեան նկատմամբ, որոնք ցայսօր ոչինչ չը կատարելով հանդերձ՝ պէտք է հոկտ. 12-ի տօնակատարութիւնը նեմացնեն։ Եւ այսուհետև էլ ի՞նչ միտք ունի զանազան տեղերում յանձնախմբեր ընտրելը, քանի որ միահաւուռ այժերով չեն գործելու և այսպիսով գործը ձգձգվելու է մինչև հանգանակման ժամանակի լրումը, որից յետոյ դրական քայլ անելը անցնելու է ապարդիւն։

Այս տեսակէտից, միանալով յօդուածագրի առաջարկին, ցանկալի ենք համարում, որ հոգ. բարձրագոյն իշխանութիւնը անտես չառնի առաջարկութիւնը և հանգանակման այդ սիստեմը ընդհանրացնի մնացեալ քաղաքների նկատմամբ էլ, վասնզի մեր ժողովուրդը դեռ ևս չի հասել այն գիտակցութեանը, որ ինքնակամ նուիրաբերութիւններ անի նման ֆոնդերին։ Վեհափառի կողմից նշանակված աշխարհիկ և հոգևոր մի քանի անձերից բաղկացած պատգամաւորութիւն, անշուշտ, կատարած կը լինի գովելի ու վեհ մի պարտականութիւն, հետեւելով Տէրոջ սասձներին՝ «Բաղխեցէք՝ բացցի ձեզ, հայցեցէք, գտջիք, խնդրեցէք՝ տացցի ձեզ»...

Ատ. Վարդանեան

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՑՄԱՆՆԵՐ ԵՆ ԹԷ ՄԷԿԸ ԵՒ ԹԷ ՄԻՍԸ

Գրական Ընկերութեան երեկոյթները տեղի են ունենում պարբերաբար, զարթեցնելով որոշ հետաքրքրութիւն հասարակութեան մէջ։ Սակայն Ընկերութեան կողմից կատարված մի քանի սենսացիոն երեկոյթները ստուեր են գցում նրա անուան վրա և առաջ բերում հիասթափութիւն հանդիսականների մէջ, որը անշուշտ պէտք է վերացրել Ընկերութեան գիկավարների սակաւին չը սիստեմատիզացված գործունէութեան։

«Մշակի» ընթերցողներին յայտնի է Վաստրօ-Ունգարիայի շահերը պահանջում են, ասում է, որ նա ձգտի դէպի այդպիսի նպատակը։

Եթէ մենոֆիզիտութիւնն է հային կաթոլիկութիւնից անջատողը, հայը միշտ հերքել է իրան վերագրված այդպիսի ազանդաւորականութիւնը և նա միշտ մնացել է և մնում է այն կաթոլիկը, ինչ որ էր մինչև Քաղկեդոնի ժողովը և ինչ որ էին այժմեան կաթոլիկ և ոչ-կաթոլիկ համարված քրիստոնեայ եկեղեցիները։ Հայը Քաղկեդոնի ժողովից այս կողմն եղած կաթոլիկութիւնը չի ընդունում, պահպանելու համար իր եկեղեցու վարչական անկախութիւնը իր եկեղեցապետի գերիշխանութեան ներքոյ։ Նա, դաւանութեան կողմից, մնում է յարված այն դաւանաբանութեանը, որ ընդհանուր քրիստոնեայ եկեղեցին ունէր մինչև յիշեալ ժողովը։

Կաթոլիկ էք համարում նրան թէ ոչ-կաթոլիկ, փրկված էք ընդունում նրան ըստ հոգւոյ թէ ոչ-փրկված, նա իր կուսաւորչի հետ է մնում, որին ծոնում է նաև այսօր վայ կաթոլիկ եկեղեցին։

Մի կողմ դրած վերացական, անշօշափելի նրբութիւնները, դէպք, ով խակապէս Քրիստոսան քրիստոնեայ է, ջանացէք փրկութիւնը գործել այն քրիստոնեայ եղբայրների, որոնց եկեղեցին աւետարանական սկզբունքների համար բազմաթիւ նահատակներ է տուել, ազգովին իսկ նահատակվել է, և իր արեան կրած զանազան հալածանքների գնով պաշտպանել ու պահպանել է Աբեղեալում բարոյական և մտաւոր լոյսի աւետարանը։ Արևմտեայ քաղաքակրթութեան, ամէն տեսակ առաջադիմութեան այդ տարրը, որ լաւագոյն ընդունելու և ծաւալելու շնորհն ունեցել է և ունի, պաշտպանեցէք և փրկեցէք։ Այդ արէք՝ և այն ամենայն յաւելցի ձեզ։ Նախ տուէք և ապա առնելուն աչք ունեցէք։

Հայ քրիստոնեայ

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍՐԻ ՅՕԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 յունիսի

Բուխարէստ.—Լիբերալների ժողովում կուսակցութեան լիդէր Բրատեանուն այն կարծիքը յայտնեց, թէ հարաւային սահմանում տեղի ունեցած փոփոխութիւնը դիպլոմատիային պէտք է ստիպէ գործել եռանդով ու վճռական կերպով. դրա համար բումիններին անհրաժեշտ է թէով ու ոգով ուժեղ զօրք։

—

Բելգրադ.—Սերբիական «Պրէս-Բիւրօն» հաղորդում է, որ Պաշիչը ներկայացրեց կաբինէտի հրաժարականի խնդրագիրը, բայց թագաւորը չընդունեց այն։ Այդպիսով մինիստրական ճգնաժամը լուծվեց. Պաշիչը կը շարունակէ իր քաղաքականութիւնը, որ յայտնի դարձաւ սկուպշչինայում նրա դեկլարացիայից։

—

Սօֆիա.—Բելգրադի բօլգարական ներկայացուցիչը այսօր սերբիական կառավարութեանը յանձնեց բօլգարական կառավարութեան պատասխանը զինաթափութեան առաջարկին։

Գէշօվը մեկնեց արտասահման։

—

Աթէնք.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ Վենիզէլօսը ուրախութեամբ համաձայնվել է մասնակցել բալկանեան պետութիւնների պրեմիէր-մինիստրների համագումարին։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿԶՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 յունիսի

Բերլին.—Յօբելեանական հանդէսների երկրորդ օրը Վիլհէլմը ընդունեց օֆիցէրների պատգամաւորութիւններին և Բերլինի արհեստաւորների 7000 ներկայացուցիչներին։ Ցերեկով կայսերական զոյգը ընդունեց գերմանական դաշնակցութեան թագաւորներին։ Բաւարական պրինց-խնամակալը ողջունեց, գովաբանելով կայսրին իբրև խաղաղութեան արթուն պահապանի, իբրև Գերմանիայի անտեսական զարգացմանը աջակցողի և իբրև բանուորների բարեկեցութեան մասին հոգացողի, մատնանշելով ապա կայսրի մատուցած ծառայութիւնները զինուորական ոյժի զարգացման գործում։ Պրինցը շնորհակալութիւն յայտնեց կայսրին դաշնակցութեան թագաւորների կողմից և մատուցեց գեղեցիկ սեղանի զարթ։ Կայսրը, խորապէս զգացված, շնորհակալ եղաւ ընծայի համար, ոչ նա ընդունում է իբրև սիմվոլ պետութեան միութեան։

—

Բուդապեշտ.—Պատգամաւորների պալատում պալատի նախագահը մատնանշեց, որ գերմանական կայսրի յօբելեանը Ունգարիայում առաջ է բերում ամենաջերմ զգացմունքներ։ Միբիսար-նախագահը իր հերթին ասաց, որ Վիլհէլմը հանդիսանում է աւստրօ-ունգարական և գերմանական դաշնակցութեան ամենակայուն նեցուկը. Ունգարիան իր ուրախութիւնը միացնում է Գերմանիայի ուրախութեանը։

Մագնատների պալատը միաձայն որոշեց շնորհաւորել Վիլհէլմ կայսրի յօբելեանը։

—

Վիէննա.—Պալատում նախագահ Սիլվէստերը փորձեց ճառել Վիլհէլմ կայսրի յօբելեանի առիթով, բայց ստիպված էր հրաժարվել իր մտադրութիւնից, որովհետև լեհերը ոտքի ելան դահլիճից դուրս գնալու համար. չէին արմատականները և հարաւ-սլաւոնները նոյն իսկ ապառնացին ցոյց անել։ Չեխ նացիոնալիստների պարագլուխներից մինը՝ Շոկը՝ նախագահին ասաց, որ Աւստրիան մի երկիր է, ուր ազգանվութեան գերակշռող մասը կազմում են սլաւոնները, բայց և այնպէս աւստրիական պարլամենտը չը մասնակցեց Բոսնիոմիների Տան յօբելեանի տօնակատարմանը։

Պատգամաւորների պալատի գերմանական կուսակցութիւնները ցոյց կազմեցին կայսրի յօբելեանի առիթով։ Պատգամաւոր Արոն բողոքեց, որ նախագահը սլաւոնների առարկութեան պատճառով հրաժարվեց արտասանել յօբելեանական ճառ։

—

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 26 մայիսի

Զուլֆայից 20 վերստ հեռու Երասխի պարսկական ափում եղող Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի վանահայրը հեռագրել էր հայր Թեմակալին, որ վանքի մօտիկ և նրա սեփականութիւնը եղող Դարաշամ գիւղի 25 տնւոր հայ գիւղացիք, ամայացնելով գիւղը, գաղթում են Կովկաս, գաղթի շարժառիթն համարելով թուրք հարևաններից կրած նեղութիւններն ու երկիւղը. և աւելի գիւղացիների մէջ տեղի ունեցող երկպառակութիւնների հետևանքով։ Թեմակալ Մելիք-Թանգեան ուղարկեց անմիջապէս առաջնորդական փոխանորդ Կարապետ քահ. Մանուկեանին, որին աջողվեց համոզել գիւղացիներին՝ անխռով նստել իրանց տեղերը առանց մի տեղ շարժվելու՝ բացատրելով միանգամայն գաղթի աղէտալի հետևանքները, Կովկասի հայ գիւղերի հողային անձուկ կացութիւնն ու այլ պայմանները։ Գործի ճիշդ կողմն այն է, որ մի հայ ընտանիքի անդամներ թշնամութիւն են ունեցել թուրքերի հետ և միւս հայ գիւղացիներն ևս ատեղի վախենալիս են եղել յիշեալ թշնամական յարաբերութիւնից։ Գիւղացի հայերը խնդրում են Արարատեանի առաջնորդարանից ռուսաց հիւպատոսի պաշտպանութիւնը։

Փոխանորդ քահանան ներկայացրել է երկու տեղեկագիր, մին՝ Դարաշամի և գիւղացիների գրութեան մասին և երկրորդը վանքի ներկայ վիճակի նկատմամբ։ Հ. փոխանորդի տեսածին ու պատմածին նայած՝ վանքի վանահայրը, որ կարգված է եղել Խրիմեան կաթողիկոսի կողմից, աչալուրջ գործունէութիւն է ցոյց տուել և շինարար անձնուրութիւն է, գործադրելով ճիգ ու ջանք վանքի բարեզարդութեան համար։ Գովելի է արդարև վանահօր աշխատասիրութիւնը. և շատ հանգամանք է, որ թեմակալ Ներսէս վարդապետ գաւառն այցելութիւն գործելու ժամանակ անցնի նաև վանքը, անձամբ տեսնէ և ստուգէ վանահօր գործերն ու տիրող պայմանները, որից յետոյ բարոյապէս վարձատրութեան առաջարկէ հոգևոր բարձր իշխանութեան, եթէ արդարև վանահայրն արժանի է խրախուսանքի։

Վանքը՝ զրկվելով վաղեմի հասոյթներից՝ տառապում է այժմ չքաւորութեան մէջ, մանաւանդ երբ Նախիջևանի մօտիկ վանքապատկան կալուածի հասոյթն սկսել է իւրացնել Ատրպատականի առաջնորդարանը։

Զարաղաղից Քէյլանի հայերը, որոնք հրաւիրված էին գալու Թաւրիզ յայտնի Քեարիմ-խանից պահանջված գուարդիների համար, եկել են արդէն։ Հայր Մելիք-Թանգեան մանրամասնօրէն զեկուցել է ռուսաց հիւպատոսին Քեարիմի ոճրագործութիւնների մասին և խոստումն է տացել աջակցելու հայերին պաշտպանելու գործում. սպասվում է Շուջա-ուդ-Դօվլէին, որ գալիս է Մամէդարադ ամարանոցում, որպէսզի սկսվի դատաւորութիւնը։

Նախանցեալ տարիներում Մուժամբար հայաբնակ գիւղը ենթարկվեց յելուզակ խաների յարձակմանն ու աւարառութեանը. Թեմակալը պահանջում է պարսից կառավարութիւնից գիւղացիների վնասը՝ 28,000 թուման. այս գործի մասին ևս Թեմակալը խնդրել է հիւպատոսի օգնութիւնը, որ խոստացել է յարգելի մարդասիրութեամբ։ Վերոյիշեալ դատերի աջողակ վախմանը ոչ միայն կը դարմանէ գիւղացիների խոշոր վնասները, այլև կունենայ մեծ ազդեցութիւն ընդհանուր բորենիների վրա, որոնք իրանց առամները խրած են պահել գիւղացու մարմնի մէջ։

«Մշակի» ընթերցողներին յայտնի է Վարդապատից Թաւրիզ եկող Թիւրքիացի հայ Գարեգին դրաշարի մասնան պարագան, որ զոհ եղաւ աւտօմօբիլի խորտակման ժամանակ Զուլֆա-Թաւրիզ ճանապարհի վրա։ Առաջնորդ Մելիք-Թանգեան ըղձքել է ռուսաց հիւպատոսին և պահանջել աւտօմօբիլի վարչութիւնից դրամական տուգանք զոհի որբերի և այրու համար։ Առանց պարսից իշխանութեան միջամտութեան հարցը բաւարար լուծումն առացաւ, յատկացվելով վարչութեան կողմից 600 բուբլի որբերին տրվելու համար։ Ցիշեալ դումարը հիւպատոսարանի կողմից յանձնվեց Թեմակալ Մելիք-Թանգեանին, որ ուղարկեց զոհի որբերին։

Նորընտիր թեմական խորհուրդը սկսել է իր գործունէութիւնը։

Թեմական խորհրդին կից ընտրվեց և մի այլ մարմին՝ ուսումնական խորհուրդ՝ հետեւեալ 3 անձերից բաղկացած։ Գէորգ Զիլինկիրեան, Կարապետ Պիօնեան և Նիկոլա Տէր-Յովհաննիսեան՝ թեմ. խորհրդի քարտուղարը։

Ուսումնական խորհրդի իրաւասութիւնը սոսկ կրթական է, և նրա իրաւունքը՝ սկսած Թաւրիզի կրթական հաստատութիւններից՝ տարածվում է Ատրպատականում գոյութիւն ունեցող ուսումնարանների և ուսուցիչների վրա։

Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԼՐԱՑՈՒՄ

«Մշակի» № 118-ում զետեղված «Դպրոցական ֆոնդը» խորագրով յօդուածը առիթ տուեց ինձ գրելու հետեւեալը՝ որպէս լրացում այդ յօդուածում արտայայտված բարի ցանկութեան, յօգուտ դպրոցական ֆոնդի բարեյաջող հանգանակման։

Մենտոր-Միրաժը, նկատի ունենալով Թուրքեստանի հայ գաղութների ժողովրդի հոգեբանութիւնը և լոգիկան, միանգամայն յոռետես է հանդիսանում, որ տեղական «յանձնախմբերը» կարող են որեէ զգալի արդիւնք ձեռք բերել, ուստի այդ տեսակէտից ամենագործնական և խելացի է համարում Վեհափառ Կաթողիկոսի հրահանգով աշխարհիկ և հոգևոր 2-3 անձերից բաղկացած մի պատգամաւորութեան այցելումը իրանց շրջաններում ի նպաստ դրպրոցական ֆոնդի գանձման։

Բայց մենք աւելին կասինք։

Մի տարի դպրոցական ֆոնդի գաղափարը արծարծելով հանդերձ՝ չը տուինք այն, ինչ որ կարելի էր սպասել մի տարվայ անդուլ աշխատանքից. մի աշխատանք, որ պարտաւոր էր կատարելու ամէն մի գիտակից անտամ. սակայն մենք, փոխանակ համախմբվելու, ընդհակառակը զբաղվեցինք անտեղի վէճերով և այդպիսով նեմացրինք մեծ ոգների յաւերժացման ակուռ։ Մինչ այսուհետև էլ կարելի է յոյս դնել մեր ինտելիգենցիայի, մանաւանդ Թիֆլիսի ինտելիգենցիայի վրա, որի անմիտ հակառակութիւնները ստիպեցին Դ. Զալիսուչեանին որակելու մեզ՝ որպէս «անմիտ վէճերով» զբաղվող մի հասարակութիւն, որը մեծ խոչընդոտ է հանդիսանալու գործի աջողութեամբ պսակվելուն։

Անշուշտ այդպիսի հասարակութեամբ է շրջապատված Անդրկասպեան երկիրը, որ Մենտոր-Միրաժը յոռետեսութիւն է արտայայտում մամուլով. թէև յօդուածագրի յոռետեսութիւնը մասնաւոր ընոյթ է կրում, այնու ամենայնիւ մենք վստահօրէն կարող ենք այդ յոռետեսութիւնը ընդհանրացնել նաև մնացեալ վայրերի ազգաբնակութեան նկատմամբ, որոնք ցայսօր ոչինչ չը կատարելով հանդերձ՝ պէտք է հոկտ. 12-ի տօնակատարութիւնը նեմացնեն։ Եւ այսուհետև էլ ի՞նչ միտք ունի զանազան տեղերում յանձնախմբեր ընտրելը, քանի որ միահաւուռ այժերով չեն գործելու և այսպիսով գործը ձգձգվելու է մինչև հանգանակման ժամանակի լրումը, որից յետոյ դրական քայլ անելը անցնելու է ապարդիւն։

Այս տեսակէտից, միանալով յօդուածագրի առաջարկին, ցանկալի ենք համարում, որ հոգ. բարձրագոյն իշխանութիւնը անտես չառնի առաջարկութիւնը և հանգանակման այդ սիստեմը ընդհանրացնի մնացեալ քաղաքների նկատմամբ էլ, վասնզի մեր ժողովուրդը դեռ ևս չի հասել այն գիտակցութեանը, որ ինքնակամ նուիրաբերութիւններ անի նման ֆոնդերին։ Վեհափառի կողմից նշանակված աշխարհիկ և հոգևոր մի քանի անձերից բաղկացած պատգամաւորութիւն, անշուշտ, կատարած կը լինի գովելի ու վեհ մի պարտականութիւն, հետեւելով Տէրոջ սասձներին՝ «Բաղխեցէք՝ բացցի ձեզ, հայցեցէք, գտջիք, խնդրեցէք՝ տացցի ձեզ»...

Ատ. Վարդանեան

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՑՄԱՆՆԵՐ ԵՆ ԹԷ ՄԷԿԸ ԵՒ ԹԷ ՄԻՍԸ

Գրական Ընկերութեան երեկոյթները տեղի են ունենում պարբերաբար, զարթեցնելով որոշ հետաքրքրութիւն հասարակութեան մէջ։ Սակայն Ընկերութեան կողմից կատարված մի քանի սենսացիոն երեկոյթները ստուեր են գցում նրա անուան վրա և առաջ բերում հիասթափութիւն հանդիսականների մէջ, որը անշուշտ պէտք է վերացրել Ընկերութեան գիկավարների սակաւին չը սիստեմատիզացված գործունէութեան։

Հասարակութեան հետաքրքրութիւնը պարտականութիւն է դնում Ընկերութեան այդ ղեկավարների վրա օր առաջ վերացնել այդ թերութիւնները՝ քանի դեռ ցրուութիւն չէ առաջ եկել նրա մէջ։ Ուստի և անհրաժեշտ է իւրաքանչիւր անգամ սիստեմատիկօրէն և որոշ ծրագրով պատրաստ լինել նրան ընդունելու և դիմաւորելու համար։

Ամէն անգամ համարեա նկատած է, որ կազմակերպողները որոշ և պատրաստի ծրագիր չունեն, որի պատճառով էլ հանդիսականների միջից սրա-նրա օձիքից քաշել և բեմ են դուրս բերել օրվան պատշաճ մի բան երգելու, արտասանելու և կամ կարդալու համար։ Այսպիսի դէպքերում բնականաբար շատ անգամ հրապարակ են նետվում այնպիսիները, որոնք երգելու, արտասանելու և կամ կարդալու շնորհք կամ տաղանդ չունեն։ Եւ ահա այս տեսակէտից որպէսզի Ընկերութիւնը իր երեսակէտից որպէսզի Ընկերութիւնը իր երեսակէտից մուրացկանութեան չը դիմէ, կոյթներին մուրացկանութեան չը դիմէ, պէտք է հանդէս գայ նա իր որոշ ծրագրով, իր կազմակերպած երգիչների և նուագածուների խմբով՝ թէկուզ և այդ որևէ ծախս նստէր Ընկերութեանը։

Ինձ թւում է, թէ Ընկերութեան կազմակերպած երեկոյթների բոլոր դասախօսութիւններն ու մատենախօսութիւնները օգի թիւններն ու մատենախօսութիւնները օգի մէջ են կատարվում, որովհետև, ինչպէս տեսնում եմ և ինչպէս հաւատիացայ, այդ բոլոր ակտերը մնում են անարձանագրելի։ և եթէ ապագայում պատմաբանը հետաքրքրվէր Գրական Ընկերութեան արխիվով, անշուշտ այնտեղ նա ոչինչ չէր գտնի։ շատ շատ՝ նա պէտք է բաւականանար լրագրական հատ ու կտոր տեղեկութիւններով։ Իսկ իմ կարծիքով՝ ոչ միայն այդտեղ անցած դարձած պէտք է գրի առնվէր և ամփոփ կերպով արձանագրվէր, այլ թէ բոլոր գրաւոր դասախօսութիւններն և մատենախօսութիւնները պէտք է մնային Ընկերութեան արխիվում՝ որպէս նրա սեփականութիւն, որպէս դոկումենտներ այդ հասատութեան։

Նման հիմնարկութիւնների մէջ եթէ պաշտօնապէս որևէ խնդիր և կամ գրութիւն է մտնում, նա դառնում է արդէն նրա սեփականութիւնը։ Այդպէս պէտք է լինի անշուշտ նաև Գրական Ընկերութեան մէջ։

Բեռ.

ՋԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

9000-ի փոխարէն 1500 ր.

Բագու, 28 մայիսի

Այսօր նահ. դատարանումն էի. այնտեղ էր և տեղիս ծխատէր Յովհ. ք. Տէր-Յովհաննիսեանը, որը միևնոյն ժամանակ Երուսաղէմի տեղիս հոգևոր գործերի ներկայացուցիչն է և գործակալը։

Տարիներ առաջ բագուեցի Լիւդվիկ Սերգէյեանը գնում է Երուսաղէմ, ուր յօգուտ վանքի 10,000 ր. ստորագրութիւն է թողնում, որպէսզի Բագու վերադառնալուց յետոյ յիշեալ գումարը փոխադրէ։ Հանելուն պէս 1000 ր. փոխադրում է, բայց մահը շուտով վրա հասնելով՝ հանգուցեալը չէ կարողանում իր խոսքը կատարել։

Մահվանից յետոյ թողնում է մի շարք կտակներ ու արած բարեգործութիւններ, սակայն կտակի մէջ յիշված չէ լինում Երուսաղէմին տուած ստորագրութիւնը։ Կտակատար նշանակված է տեղիս առաջին փոխատու բանկի լիազօր Ստ. Գր. Այվազեանը, որը, քննելով հանգուցեալի կտակը և աչքի առաջ երևացող հարստութիւնը, տեսնում է, որ հնարաւորութիւն չը պիտի ունենայ Երուսաղէմի մնացեալ 9000 ր. վճարել, իսկ եթէ վճարելու լինի, այն ժամանակ հանգուցեալի օրինական կտակը թերի պիտի կատարվի։ Հետևաբար, ինչպէս կտակատար, սկզբունքով որոշում է կանգնել բուն կտակի իրագործման կողմը։

Երուսաղէմի հոգ. վարչութիւնը տեղիս գործակալի միջոցով դիմում է նահ. դատարան և երդ.-հաւ. Տէր-Յովսէփեանի միջոցով հանգուցեալի ժառանգներից պահանջում է մնացեալ 9000 ր. գումարը։ Կտակատար Ս. Այվազեանն էլ իր հերթին իրաւաբան Իւղբաշեանի միջոցով սկսում է պաշտպանել կտակի իրագործման կողմը։ Սակայն մինչև գործի վերջնական քննութիւնը, Այվազեանի և հայր Յովհաննէսի միջև գործը հաշտութեամբ վերջացնելու միտքն է յղանում, և հ. Յովհաննէսը գրում է Երուսաղէմի պատրիարքարանին, իրերի դրութիւնը յայտնելով, և խորհուրդ է տալիս 1500 բուբլով հաշվել։ Վերջինս ստացական 1500 ր. անդորրագիր ուղարկելով կապում է հաշտութիւն, որի պատճառով այսօր երկու կողմերի հաւատարմատարները դատարան էին եկել հաշտութեան պաշտօնական արձանագրութիւնը ստորագրելու։

Ս. Գարագաշ

—

Այնու ամենայնիւ մահվանից չազատվեց

Սղնախ, 27 մայիսի

Տեղացի մի երիտասարդ՝ Դ. Էլիզբարեան՝ մի քանի տարի առաջ պէտք է վիճակ հանէր։ Կամենալով ազատվել զինւորագրվելուց, Էլիզբարեանը խմում է ծխախոտի հիւթը և թունաւորվում. և, ճիշդ որ, ազատվում է զինւորական ծառայութիւնից։ Սակայն ծխախոտի հիւթը նրան հիւանդացնում է թոքախտով։ Հիւանդը պառկում է անկողնում։ Բժիշկները խորհուրդ են տալիս ծնողներին՝ հեռացնել տան անդամներին, որպէսզի չը վարակվեն հիւանդից։ Տեսնելով որ մահվան օրերը մօտեցել են, Էլիզբարեանը այս օրերս յարմար ժամանակ գտնելով՝ վերցնում է հրացանը և գնդակահարում իրան։

N. N.

—

Լուրեր Բասար-գէչարից

Բասար-գէչար (Ն.-Բայազետ. գ.), 23 մայիսի

Ամսիս 20-ին գիւղից դուրս ձերբակալվեց տաժանակիր աշխատանքից փախած ու Պարսկաստանում 10 տարուց աւելի հանգիստ ապրած Փոքր-Մաղրա թուրքաբնակ գիւղի բնակիչ մարդասպան Դաֆար Բեաբլայի Բադալ-օղլին։ Մօտն ունէր պարսկական անցագիր։ Երկար հարց ու փորձից յետոյ յայտնեց իր ով լինելը։

Մեզանում յամառ կերպով խօսում են, որ պատշաճաւոր իշխանութիւնն արդէն թոյլատրել է Բասար-գէչարում սեպտեմբերից պօստի բաժանմունք և հեռագրատուն բաց անել։

Գիւղացիք 4-5 օր է իրանց արօտատեղի սարն են բարձրանում կենդանիներով։ Կանաչ խոտը դեռ շատ սակաւ է, մօտի սարերը ձիւնոտ, իսկ եղանակը սաստիկ ցուրտ։ Փչում է սովորական ցուրտ քամի, արև չը կայ, վառարանները վառվում են. եղանակը կատարեալ ձմեռ է ներկայացնում։ Գիւղացին սրտաբորվի սպասում է գոնէ գարնան վերջին տաք եղանակ տեսնելու։

Կաթիլ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Ստացանք Թիֆլիսաբնակ մշեցի Դաւթ Բրսէեանից «Մշակի» 7 ամսվայ բաժանորդագրվաբ՝ յունիսի 1-ից մի օրինակ ուղարկելու յիշեալ անձի կողմից իբրև նուէր Մուշի Վերին-Թաղի Երիտասարդ. Միութեան գրադարանին։

◆ Նոր-Նախիջեւանից ստացանք հետեւեալ հեռագիրը պրոֆ. Մարբին յանձնելու համար. «Հայոց Բարեգ. Ընկերութիւնը իր տարեդարձի օրը խմում է փառաւոր գիտնականի երկարակեցութեան և անդրադարձի բեղմնաւոր աշխատութիւնների համար, գիտնականի, որ զարթեցրեց քնից նիրհած գեղեցիկ Անին։ Նախագահ Ընկ. Գր. Զալխուշեան»։

◆ Թիֆլիսում փակվեց վրաց էկզարխութեան կրօնաւորների առաջին համագումարը։ Մասնակցողները ներկայացան էկզարխ Ինոսէնտի արքեպիսկոպոսին։

◆ Կիրակի, յունիսի 2-ին, կովկասեան շերամապահական կայարանի վերահսկիչ Իվանովը իր երեխաների և ծանօթների հետ վանովը իր երեխաների և ծանօթների հետ գնաց Սաբուրթալոյից եօթն վերստ հեռու՝ Ռազմավիրական ճանապարհի մօտ օրը անցնելու։ Գնացողները սկսեցին ձուկ որսալ, որի ժամանակ Իվանովի 9 տարեկան տղայ Պետեան և Կովկասի գաղթականական մասի կառավարիչ Մուլինի որդի 13 տարեկան Գեօրգին յանկարծ ընկան գետը և տարվեցին ջրի հոսանքից։ Իվանովը և միւսները ընկան ջուրը և ապատեցին խեղդվողներին։ Այդ ժամանակ Մուլինի աղջիկ 16 տարեկան գիմնազիստուհի Իրաիդան, երևի, ցնցվելով իր եղբօր հնարաւոր կորստի պատկերից, իր հերթին ընկաւ ջուրը եղբօրը օգնելու և խկոյն անյայտացաւ ջրի մէջ։ Կարծում են, որ ջուրն ընկած բոպէին էլ նա ուշաթափվել է։ Ջրից հանած Գեօրգին և Պետային տրորելով ուշքի բերին։ Իսկ դժբաղդ Իրաիդան խեղդվեց և միայն ժամը 4½-ին ձկնորսները հանեցին նրա դիակը Սաբուրթալոյի մօտ։ Օնողների վիշտը աննկարագրելի է։

◆ Թիֆլիս են եկել Մոսկվայի եկեղեցական և գիւղատնտեսական դպրոցների 30 աշակերտներ, որոնք իջևանել են Դաւիդովեան քաղաքային դպրոցում։

◆ Պետերբուրգում նախագիծ է մշակված Աբասթումանի հանքային ջրերը զինւորական մինիստրութեան հսկողութիւնից առաւելի ու արդիւնաբերութեան մինիստրութեան իրաւասութիւնը յանձնելու մասին։

◆ Այսօր նշանակված է Թիֆլիսի քաղդումայի վերջին նիստը մինչև ամառվայ վերջը։

◆ Յունիսի 3-ին, պաշտօնական և քաղաքացիական ներկայացուցիչների ներկայութեամբ, բացվել է ծերացած վարժուհիների ապաստարանը։

◆ Թիֆլիսումն է Բագուի քաղաքապետ Մարտինովը։

◆ Երկուշաբթի, յունիսի 4-ին, Հաւլաբարի հասարակական ակումբի ամբարձին շինութեան մէջ բժ. Կարապետեանի այգում, տեղի է ունեցել Հայ Գրողների Ընկ. վարչութեան կազմած հրապարակային հացկերոյթը մօտ 70 զանազան անձերի ներկայութեամբ։

◆ Թիֆլիսի Հայոց Դրամ. Ընկ. անդամների ընդհանուր ժողովի շարունակութիւնը լրացուցիչ ընտրութիւնների համար կայանալու է կիրակի, յունիսի 9-ին, ցերեկվայ ժամը 12-ին։

◆ «Т. Л.»-ի ասելով, ներկայումս տեղի են ունենում Եւլախ-Շուշի երկաթուղու կառուցման հողային աշխատանքները։ Բոլոր աշխատանքները վերջանալու են 2 տարվայ ընթացքում։

◆ Կովկասեան շրջանային զինւորական-նանաբուժական տեսուչ Լիսիցինը մեկնեց Վլադիկավկազ։ Կողը մեկնեց կովկասեան հանքային վարչութեան կառավարիչ հանքային ինժեներ Ժակը արքունի աղահանքերը դիտելու համար։

◆ Ցայսնի արևելագէտ Դիերը մեկնել է Զաքաթալայի շրջանի Սարբեալ գիւղը, ուր նա մտադիր է գրամոֆոնի օգնութեամբ գրի առնել թաթարական հին երգերը, նաև ժողովել տեղեկութիւններ ազգաբնակութեան լեզուի առանձնայատկութիւնների մասին։

◆ Ա. Մանդելեանի թաղումը Թիֆլիսում կատարվեց համեստ կերպով։ Դագաղի վրա դրված էին շատ պսակներ, որոնց թւում մի արծաթեայ պսակ և մի կենդանի ծաղիկներից պսակ, վրան դրված կակուղ գերի պատկերը։

◆ Դիլիջանից ինժեներ Եարալեան մեզ հեռագրում է հետեւեալը. «Սասիկ անձրևների շնորհիւ Աղտաֆայից 56 վերստ հեռաւորութեան վրա խճուղին փչացած է։ Հաղորդակցութիւնը դադարեցված է։ Մի-ջոցներ են ձեռք առնված վերականգնելու հաղորդակցութիւնը»։

◆ Վրիպակ.- «Մշակի» երէկվայ համարում, «Հայկական հարցը իտալական պարլամենտում» թարգմ. յօդուածի մէջ սպրդել են հետեւեալ տպագր. սխալները։ Վերջին սիւնակի 3-րդ պարբերութեան մէջ վերջին երեք տողում ասված է՝ «... պարբերական տեղեկատուութիւնները գրաւեցին արիւնի և կոտորածների գործողութեամբ»։ Պէտք է կարդալ՝ «զրպնցին»։ Վերջին պարբերութեան մէջ ասված է՝ «Սակայն հայ պարբերքի ձայնը կայ, որ և այսօր բողոք է արձակում նորանոր խոստումների դէմ»։ Պէտք է կարդալ՝ «խստութիւնների դէմ»։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Կ. Պոլսում տէրրոր է։ Կալանաւորումները ամեն ժամ շարունակվում են։ Սուլթանը տկարացել է։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ չը նայած բազմաթիւ ձերբակալութիւններին և նոյն իսկ արիւնահեղ ընդհարումներին, երիտասարդ-թիւրքերին չաջողվեց ձերբակալել Մահմուդ-Շեվքէթ-փաշային սպանող Զիյային։

◆ Կ. Պոլսում տիրում է պաշարողական դրութիւն։ Փողոցները լի են զօրքերով։ Ազգաբնակութիւնը անհանգիստ է։ Անկիւնութիւնը դուրս է բարձրացնում։

◆ Զաթալջայի զօրքերը երդվելով տապալել երիտասարդ-թիւրքերը բէժիմը, լուրերի համաձայն, դիմում են դէպի Կ. Պոլիս։

◆ Կ. Պոլսից ուղարկվող շատ հեռագիրներ տեղ չեն հասնում։ Ըստ երևոյթին այնտեղ սպասվում կամ արդէն կատարվում են ահեղ դէպքեր։

◆ Եւրոպական դեսպանները Կ. Պոլսից հերթական հեռագիրներով իրանց կառավարութիւններից պահանջեցին օգնաւորներ ժանդակ օգնութիւն քրիստոնեաների ապահովութեան համար։

◆ Կ. Պոլսի մզկիթները լի են մահմեդական խուժաններով, որոնց մէջ պրոպագանդա են մղում մօլլաները երիտասարդ-թիւրքերի դէմ։ Վերջինները տասարդ-թիւրքերի դէմ։ Վերջինները առհասարակ իրանց ձեռքն ընկած հասարակ զինւորական դատարանների միջոցով մահացնում են։ Դրութիւնը ծայրայեղ վտանգաւոր աստիճանին է հասել։

◆ «Մ. և Ա.» կոմիտէին թշնամի օֆիցէրները որոնում են Էնվեր-բէյին և Թալէաթ-բէյին՝ սպանելու համար։

◆ Բ. Դուռը շրջապատված է կոմիտէին հաւատարիմ զօրքերով։ Ոչ մի կապ նրա և դրսի աշխարհի միջև չը կայ։ «Մ և Ա.» կոմիտէը Բ. Դրան մէջ շարունակ նիստեր է գումարում։ Լուրերի համաձայն նրանք արդէն մահացրել են գահաժառանգին։

◆ Թիւրք-յունական դաշնագիրը օրվայ խնդիր է դարձել։

◆ Կոմս Վիտտէն ստացաւ արձակուրդ կէս տարով։

◆ Պետ. Դումայի և կառավարութեան միջև ծագած լարված յարաբերութիւնը վերջացաւ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

4 յունիսի

Վիեննա։ Ստուգելուց յետոյ պարզվեց, որ օդագնաց Իվնէրը երէկ բարձրացել էր 4730 մետր և այդպիսով սահմանել է հարաբարձային նոր մրցակէտ։

Վիեննա։ Երէկ երեկոյեան ժ. 8-ին զգացվեց երկրաշարժ։

Պետերբուրգ։ «Օրէնքների ժողովածուի» մէջ հրատարակված է Բարձրագոյն այն հրամանը, որով առաջարկվում է սենատին հիմնել նորածիններին և մայրերին պաշտպանելու համառուսական հոգաբարձութիւն և ընդունել այն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Թէոդորովնայի հովանաւորութեան ներքոյ։ Իբրև յիշեալ հոգաբարձութեան կենտրոնական օրգան Պետերբուրգում հաստատվում է առանձին ինստիտուտ՝ նորածիններին խնամելու համար։ Այդ գործի իրականացման համար կազմվում է դրամագլուխ 1.000,000 բուբլու տոկոսիքով ու նուիրաբերութիւններով հանդերձ։

Թէհրան։ Մէջլիսից հաղորդում են, որ Բազարատ գիւղում բուբոնի ժանտախտից մահացել են 17 հոգի։

ԼՕՆԴՈՆ։ Մի հանքում ջրի մէջ խեղդվեցին 8 բանւոր։

ՈՒՍԿԻԻԲ։ Ստացված տեղեկութիւնների համաձայն, Իշտիբում զօրքերի մէջ խօլերա է երևացել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ

Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտագին շնորհակալութիւն

Ձեր տուած խորհրդի և բժշկելուն համար։ «Բիօլ-Լաուէյը» կը յանձնարարեմ նաև այլոց, որոնք կը կասկածեն բժշկել զանազան ախտերից, որոնցով ինքս ևս տանջվում էի երկար տարիներ։ Ես ինձ վերստեղծված եմ զգում, և կրկին անգամ յայտնում եմ իմ շնորհակալութիւնը Ձեր «Բիօլ-Լաուէյ» թանգագին դեղի համար։ Ուղարկում եմ Ձեզ իմ լուսանկարը։

Ցարգանքով՝ Ա. Ն. Նովիկով

եթէ Դուք հիւանդ էք ընդհանուր կամ սեռական թուլութեամբ, ունէք գլխացաւ, անքնութիւն, արեան պակասութիւն, տանջվում էք օճանիզմից ու նրա հետևանքներից, ունէք վախկոտութիւն, բոյլ յիշողութիւն, փնտրատ. հիւանդ. հետևանքներ, եթէ Դուք ջղային էք, զրգռվող, յոգնած—խնդրէք գեղատանը մի տուփ «Բիօլ», սակայն իսկական «Բիօլ-Լաուէյ»։ Դուք փայլուն հետևանքներ կը ստանաք։ Դա յայտնի դեղ է նէվրաստենիայի դէմ և միանգամայն անփոխարինելի է։ Ցեղեկ. համար կարելի է գիմել՝ С.-Петерб., отд. 3 части. почтов. ящ. № 371.

(23) (П. 81582)

Ռուսական կահկարասիներ

Մեծ քանակութեամբ աշակերտական նստարաններ և գրատախտակներ մաքուր կարանոցի փայտից շինված. ծախվում են ամենաէժան գներով։ Հարցնել՝ Окоевская ул. № 23. 4 уч. մանրավաճառի խանութում։

452. 4—4

Извѣщаю

г. г. кліентовъ, что для ихъ удобства мною снято въ самомъ центрѣ города на Эриванской площ. уголъ Пушкинской и Армянскаго баз. № 2 при пом. Стр. О-ва «Волга» помѣщеніе для ПРІЕМА ОБЪЯВЛЕНІЙ, какъ для мѣстныхъ, такъ и для иногородныхъ газетъ и журналовъ утромъ съ 9 ч. до 3½ ч. дня, веч. съ 5 ч. до 7½ ч. веч. на условіяхъ съ разсрочкой платежа. Отъ нѣкоторыхъ газетъ имѣю исключительное право пріема объявленій. Тамъ же принимается переписка дѣлов. бумагъ на пишущихъ машинахъ.

Справиться по телефону: 1) Ваке около Дворян. гимназіи, соб. д. тел. № 925. 2) Гост. Ветцеля, Мих. пр. тел. № 380

Съ сов. почт. агентъ

М. А. ГАЖОНІА

(о. м.) 464. 5—2

Յայտարարում ենք

և գիտութիւն մեր յարգելի գործակալների, որ տեխնիկական յարմարութիւնների պատճառով պահանջները (սօլիտերի) հասցէագրել՝ Тифлисъ, до востребованія Арутюну Ахназарову.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թվի մայիսի 18-ից մինչև 1914 թ. մայիսի 17-ը։

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացք** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հայի-Կարսլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօստսաար գնացք** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հայի-Կարսլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցերեկ։ **Մարդասար գնացք** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հայի-Կարսլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացք** № 106 (Մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցերե., Եւլախ 5 ժ. 19 ր. ցերե., Հայի-Կարսլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.— **Պօստսաար գնացք** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցերե., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդասար գնացք** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդասար գնացք** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացք** № 107 (մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստսաար գնացք** № 4/3—12 ժ. 51 ր. ցերե., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 48 ր. գիշ., Եջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցերե.։ **Մարդ.-ապրանքատար գնացք** № 24/23 (միայն II և III կարգի վագոնները)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 6 ժ. 57 ր. առ., Եջմիածին 12ժ. 10 ր. ցերե., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցերե., Երևան 1 ժ. 33 ր. ցերե.։ **Մարդասար-ապրանքատար գնացք** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 50 ր. ցերե., Կարս 4 ժ. 18 ր. ցերե.։

ԲՈՐԺՕՄԻ.—**Մարդասար գնացք** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բորժոմ 9 ժ. 31 ր. ցերե.։ **Մարդասար** № 19/20—3 ժ. 18 ր. ցերե., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցերե., Բորժոմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացք** № 5—9 ժ. 35 ր. կր. **Պօստսաար գնացք** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդասար գնացք** № 7—3 ժ. 53 ր. ցերե.։ **Խառն գնացք** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստսաար գնացք** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդասար գնացք** № 8—5 ժ. 54 ր. ցերե.։ **Մարդասար գնացք** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացք** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆՑԻ.—**Պօստսաար գնացք** № 4Д/3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացք** № 26/25—(II և III կարգի վագոնները)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացք** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՕՄԻՑ.—**Մարդասար գնացք** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդասար գնացք** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԼՈԲՈՍ ՏԵՍԱԻ

Թիֆլիսի մի խումբ ուսուցիչների կազմած Հայոց լեզուի ստորին տարվայ

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

ՄԵՐ ԴՊՐՈՑԸ

որն ամփոփում է իր մէջ՝

1) Ձեռագիր այբբենարան,
2) Ընթերցարան և
3) Արտագրութեան ձեռագիր պարզ օրինակներ։

Դասագրքի ամբողջ նիւթը նորագիւտ է և զարդարված բազմաթիւ նկարներով։

Գինն է 25 կոպ.

Ճանապարհածախսով 30 կոպ., որ կարելի է ուղարկել պօստի մարկաներով։

Դիմել՝ բոլոր գրախանութներին։ Պահեստը՝ Тифлисъ, Книжный магазинъ «Новая Жизнь», Л. Карапетянцу.

հ. կ. 453. 3—2

Զափահասների համար

ԼՈԲՈՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Բժշկ. Քէլդէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վիներական և այլ ցաւեր), բազմաթիւ բէյէպտներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Տրիպէր (սուսումակ) եւ նրա բժշկութիւնը» բէյէպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է 20 կ.։
3) «Կենիարմաթի շալվարը կամ մօդնի իւրկէն», խիստ ծիծաղաշարժ վոդեվիլ միմիայն չափահասների համար։ Գինը 20 կ.։
4) «Սօճայի նշանդրէքը» յայտնի վոդեվիլը, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն։ Գինը 15 կ.
5) «Միհրնոյշ դպրոցում», պատմուածք հայերգրական կրուներից. գիմնազիի նկարներով Գինը 7 կ.։
6) «ԲաՀՔիի կենսագրութիւնը», պատկերով։ Ամենքին հասկանալի գրված։ Գինը 10 կ.։

Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին։ Պատանդողները պէտք է առաջուց գրկեն գրքերի գինը մարկաներով ճանապարհած պէտք՝ բոլոր գրքերը միասին—17 կոպ. (Ընդամենը՝ գրպարոյ)։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г Есаянцу.

(հ. կ.) 44. 100—40

ՊԱՆԳԼԻՍՈՒՄ

Պիսարսկայա փողոցի վրա, անտառի դիմաց, տրվում է Ե. Ծատուրեանի ԱՄԱՐԱՆՈՑԸ—բաղկացած 6 սենեակից՝ ամեն յարմարութիւններով և տարք ու կարգով (պիանինո)։ Պայմանների մասին տեղեկանալ Թիֆլիսում, Դիմրցօվայա փողոցի վրա, Ե. Ծատուրեանի դէպոյում։

456. 4—3

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎ ԿԱՍԻ ՓՈԽԱՐԲԱՅԻ

ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ

(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր և այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրիտ և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կատարել, կամ բրոշիւրներ շինել, ու այնու յանձնել։

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԻՆՏԵԼՈՒ ԳԾԵՐՈՎ։

Տելեֆոն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный